



ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի բաժնետերերին և տնօրենների խորհրդին

Մեր վերապահումով կարծիքը

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքը» բաժնում նկարագրված հարցի ազդեցության, ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական վիճակն առ 2020թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ առ 2020թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունն և այլ բացատրական տեղեկատվություն:

Վերապահումով կարծիքի հիմքը

Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում արտացոլված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 30,899,149 հազար դրամ և 60,811,008 հազար դրամ, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 29,040,503 հազար դրամ և 61,441,974 հազար դրամ: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ում բացահայտված տեղեկատվությունը վկայում է այնպիսի հանգամանքների առկայության մասին, որոնք հանդիսանում են տվյալ ակտիվների հնարավոր արժեզրկման հայտանիշ: Այնուամենայնիվ, Ընկերությունը չի իրականացրել հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների փոխհատուցվող գումարի չափում, համաձայն ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի՝ որոշելու համար տվյալ ակտիվների հաշվեկշռային արժեքի նվազման և արժեզրկումից կորստի ճանաչման անհրաժեշտությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվերին ավարտված տարիների համար: Մեր կարծիքով, 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանահատված է, սակայն Ընկերության կողմից ակտիվների փոխհատուցվող գումարի չափման բացակայության պայմաններում, մենք հնարավորություն չենք ունեցել գնահատել հիմնական

«Փրայսուոթերհաուս Կուպերս Արմենիա» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռ.՝ (37410) 512151, ֆաքս՝ (37410) 521000, www.pwc.com/am



միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի նվազման, ինչպես նաև ճանաչման ենթակա արժեզրկումից կորստի գումարը:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՄՄ Վարքագիր») սկզբունքների: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՄՄ Վարքագրին համապատասխան:

Հանգամանքների շեշտադրում

Ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ին, որում ներկայացված է 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ընկերության գործունեության իրականացման միջավայրը, ինչպես նաև նշված հանգամանքների հնարավոր ազդեցությունը ապագայում Ընկերության գործունեության վրա: Մենք չենք արտահայտում ձևափոխված կարծիք այս հարցի կապակցությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությանը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ որպես ամբողջություն, զերծ են սխալներից կամ խարդախության արդյունքում




առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի պատճառով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում՝ մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախությամբ պայմանավորված էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացում կամ ներքին հսկողության չարաշահում:
- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումներն և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմնական գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվում է ճշմարիտ ներկայացումը:



Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի ու ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:


Ալեքսեյ Դուսանով
Տնօրեն



PricewaterhouseCoopers Armenia LLC

5 մարտի 2021թ.

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2020թ.

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի գործունեությունը	5
2	Ընկերության գործառնական միջավայրը	5
3	Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում	7
4	Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման էական գնահատումներ և դատողություններ	18
5	Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին	19
6	Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ	20
7	Սեզոնական տեղեկատվություն	26
8	Հիմնական միջոցներ	37
9	Ոչ նյութական ակտիվներ	38
10	Պաշարներ	39
11	Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	39
12	Ժամկետային ավանդներ	41
13	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	41
14	Կանոնադրական կապիտալ	42
15	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	42
16	Պարտավորությունների գծով պահուստներ	43
17	Հասույթի վերլուծությունն ըստ տեսակների	44
18	Վաճառքի ինքնարժեք	45
19	Այլ գործառնական եկամուտ	45
20	Իրացման ծախսեր	45
21	Ընդհանուր և վարչական ծախսեր	46
22	Այլ գործառնական ծախսեր	46
23	Շահութահարկ	46
24	Նշանակալի ոչ դրամական ներդրումային գործունեություն	49
25	Պայմանական դեպքեր և պարտավորություններ	49
26	Ֆինանսական ռիսկերի կառավարում	50
27	Կապիտալի կառավարում	54
28	Ֆինանսական գործիքների իրական արժեք	54
29	Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների	55
30	Կապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ	56
31	Իրադարձություններ հաշվետու ժամանակաշրջանից հետո	58


**«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

հազ. ՀՀ դրամ	Ծնթց.	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	30,899,149	29,040,503
Ոչ նյութական ակտիվներ	9	60,811,008	61,441,974
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		91,710,157	90,482,477
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	10	3,493,961	2,880,404
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11	648,202	1,009,980
Սահմանափակ օգտագործման կարճաժամկետ ակտիվներ		448,433	1,057,347
Վաճառքի համար պահվող ակտիվներ		34,156	34,156
Ժամկետային ավանդներ	12	8,217,726	7,386,277
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	238,715	417,451
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		13,081,193	12,785,615
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		104,791,350	103,268,092
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	14	104,152,946	104,152,946
Կուտակված վնաս		(4,915,447)	(6,781,167)
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		99,237,499	97,371,779
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Աշխատակիցներին հատուցումների գծով պահուստ		260,731	250,702
Հետաձգված շահութահարկի գծով պարտավորություն	23	1,898,958	2,179,029
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		2,159,689	2,429,731
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	1,790,828	2,085,886
Կրեդիտորական պարտքեր անձնակազմին		737,103	626,944
Աշխատակիցներին հատուցումների գծով պահուստ		50,498	51,004
Այլ պարտավորությունների և վճարների գծով պահուստներ	16	815,733	702,748
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		3,394,162	3,466,582
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		5,553,851	5,896,313
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		104,791,350	103,268,092

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2021թ. մարտի 5-ին:


Ալեքսեյ Մեյնիկով
Գլխավոր տնօրեն




Վեներա Ալեքսիայան
Գլխավոր հաշվապահ

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Ծնթգ.	2020թ.	2019թ.
Հասույթ	17	20,946,798	22,166,192
Վաճառքի ինքնարժեք	18	(17,556,852)	(17,090,699)
Համախառն շահույթ		3,389,946	5,075,493
Այլ գործառնական եկամուտ	19	820,264	402,372
Իրացման ծախսեր	20	(141,371)	(132,221)
Ընդհանուր և վարչական ծախսեր	21	(2,432,689)	(2,375,471)
Այլ գործառնական ծախսեր	22	(187,961)	(1,746,579)
Գործառնական շահույթ		1,448,189	1,223,594
Տոկոսային եկամուտ		712,300	518,565
Շահույթ մինչև հարկումը		2,160,489	1,742,159
Շահութահարկի գծով ծախս	23	(294,769)	(627,997)
ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՑԹ		1,865,720	1,114,162
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ		1,865,720	1,114,162

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ
Մեֆական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Կանոնադրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը սեփական կապիտալ
Առ 1 հունվարի 2019թ.	104,152,946	(7,895,329)	96,257,617
Ընդամենը 2019թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	1,114,162	1,114,162
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	104,152,946	(6,781,167)	97,371,779
Ընդամենը 2020թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	1,865,720	1,865,720
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	104,152,946	(4,915,447)	99,237,499

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2020թ.

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Ծնթ.	2020թ.	2019թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Շահույթ մինչ շահութահարկով հարկումը		2,160,489	1,742,159
Ճշգրտումներ.			
Մաշվածություն և ամորտիզացիա	8, 9	4,516,670	4,499,333
Կոնցեսիոն ակտիվների բարելավումից ստացված ոչ դրամական հասույթ	17, 24	(2,461,536)	(2,564,298)
Հիմնական միջոցների օտարումից գուտ (եկամուտ)/վնաս	19,22	(28,613)	1,219,649
Եկամուտներ ակտիվների ապամոնտաժումից	19	(44,872)	(31,014)
Տոկոսային եկամուտ		(712,300)	(518,565)
Փոխարժեքային տարբերություններից գուտ վնաս	22	30,613	45,004
Անհուսալի դեբիտորական պարտքերի գծով պահուստի աճ	22	4,747	194,596
Պաշարների դուրսգրում	22	36,055	98,507
Այլ պահուստների աճ	22	48,626	133,756
Առևտրային կրեդիտորական պարտքերի հրաժարումից եկամուտ	19	(1,978)	-
Գործառնական գործունեությունից գուտ դրամական միջոցների հոսքեր մինչ շրջանառու կապիտալի փոփոխությունները		3,547,901	4,819,127
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի աճ/(նվազում)		355,837	(206,178)
Պաշարների (աճ)/նվազում		(649,612)	37,012
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի (նվազում)/աճ		(312,666)	350,796
Շրջանառու կապիտալի փոփոխություններ		(606,441)	181,630
Ստացված տոկոսային եկամուտ		445,660	531,527
Սահմանափակ օգտագործման կարճաժամկետ ակտիվների վճարում		(481,000)	(988,928)
Գործառնական գործունեությունից գուտ դրամական միջոցների հոսքեր		2,906,120	4,543,356
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(2,388,506)	(1,044,722)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		-	31,513
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(196,222)	(824,098)
Ժամկետային ավանդների տեղաբաշխում		(5,921,410)	(6,529,440)
Ժամկետային ավանդների մարում		5,420,865	3,900,000
Ներդրումային գործունեությամբ օգտագործված գուտ դրամական միջոցների հոսքեր		(3,085,274)	(4,466,747)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		418	455
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	13	417,451	340,387
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	13	238,715	417,451

Ներդրումային գործարքները, որոնցով չի պահանջվել դրամական միջոցների և դրանց համարժեքների օգտագործում, ներառված չեն դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում և բացահայտված են Ծանոթագրություն 24-ում:

1 «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի գործունեությունը

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

Ընկերությունը գրանցվել է 2008թ. հունվարի 31-ին Հայաստանի Հանրապետությունում: Այն հանդիսանում է բաժնետոմսերով սահմանափակված պատասխանատվությամբ բաժնետիրական ընկերություն և ստեղծվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության մայր ընկերությունն է «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ն, իսկ Ընկերության վերջնական հսկողությունն իրականացնում է Ռուսաստանի Դաշնության կառավարությունը:

Հիմնական գործունեությունը. Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ բեռնատար փոխադրումները և ուղևորափոխադրումները, ինչպես նաև կոնցեսիոն պայմանագրի ներքո համապատասխան ենթակառուցվածքի շինարարության, արդիականացման և շահագործման ծառայությունների մատուցման միջոցով Հայաստանի Հանրապետությունում երկաթուղային ենթակառուցվածքի զարգացումը: Համաձայնությունը կարգավորվում է կոնցեսիոն պայմանագրով, որը կնքվել է Հայաստանի Հանրապետության կառավարության հետ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, որը հանդես է գալիս որպես կոնցեսիոն (իրավունք տրամադրող կողմ): Կոնցեսիոն համաձայնագրի շրջանակներում կոնցեսիոնարը Ընկերությանը տալիս է իր սեփականությունը հանդիսացող կոնցեսիոն ակտիվների տիրապետման և օգտագործման իրավունք: Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո, Ընկերությունը պարտավոր է կոնցեսիոն ակտիվները փոխանցել կոնցեսիոնտին այնպիսի վիճակում, որը թույլ կտա շահագործել ենթակառուցվածքն առնվազն երեք տարվա ընթացքում՝ առանց որևէ էական բարելավման:

Տրանսպորտային ծառայությունների սակագները կարգավորվում են միջկառավարական համաձայնագրերով:

Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0005, ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 50:

2 Ընկերության գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետություն: Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերում է զարգացող շուկաներին բնորոշ որոշակի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական դաշտը շարունակում է զարգանալ և ենթարկվել հաճախակի փոփոխությունների, ինչպես նաև կարող է ունենալ տարաբնույթ մեկնաբանումների (Օանոթագրություն 25): Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, և Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստանի Հանրապետություն տեղի են ունենում դրամական միջոցների զգալի հոսքեր: Հետևաբար, տարածաշրջանում պահպանվող քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը և Ռուսաստանի Դաշնության առջև ծառայած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական և կորպորատիվ ոլորտների վրա:

COVID-19: 2020թ. մարտին 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի համաճարակը որակեց որպես համաշխարհային համավարակ: Ի պատասխան համավարակի՝ Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկվել են COVID-19-ի տարածման և ազդեցությանը զսպման ուղղված մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ ճանապարհորդության արգելքները և սահմանափակումները, կարանտինները, ինքնամեկուսացումը, գործարար գործունեության սահմանափակումները, ընդհուպ ձեռնարկությունների փակումը:

2 Ընկերության գործառնական միջավայրը (շարունակություն)

Այս միջոցառումները, ի թիվս այլոց, խիստ սահմանափակել են Հայաստանում տնտեսական գործունեությունը, բացասաբար են ազդել, և դեռևս անորոշ ժամանակով կարող են շարունակել բացասական ազդեցություն ունենալ գործարարության, շուկայի մասնակիցների, Ընկերության պատվիրատուների, ինչպես նաև Հայաստանի և համաշխարհային տնտեսության վրա:

Ղեկավարությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու և իր հաճախորդներին և աշխատակիցներին աջակցելու համար.

- աշխատակիցների և այցելուների ջերմաչափում և Ընկերության տարածքում պարտադիր դիմակ կրելու ռեժիմ,
- հնարավորության դեպքում Ընկերության աշխատանքային պարտավորությունների հեռահար կատարում,
- նոր մատակարարների և փոխադրումների ուղղությունների որոնում,
- ծառայությունների սակագների որոշման վերաբերյալ անհատական մոտեցումներ:

Լեռնային Ղարաբաղի պատերազմը և դրա հետևանքները: Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտությունը սկսվեց 2020թ. սեպտեմբերին և շարունակվեց մինչև 2020թ. նոյեմբեր, երբ Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ղեկավարների կողմից ստորագրվեց համատեղ հայտարարություն, համաձայն որի՝ Լեռնային Ղարաբաղի շրջաններից մի շարք տարածքներ փոխանցվեցին Ադրբեջանին, և ակնկալվում է տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակում: Տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակման վերաբերյալ որոշումները ներկայումս մշակվում են փորձագիտական խմբերի կողմից: Այս բոլոր իրադարձություններն ու գործողությունները էապես ազդում են Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա:

Վերը նշված իրադարձությունները հանգեցրել են Ընկերության 2020 թ.-ի հասույթի որոշակի նվազման: Միևնույն ժամանակ, այդ իրադարձությունների ամբողջական ազդեցությունն Ընկերության գործունեության վրա հավաստի գնահատվել չի կարող:

Ներկայիս տնտեսական իրավիճակի հետագա հետևանքները և Կառավարության ձեռնարկած միջոցառումները դժվար է կանխատեսել, և Ղեկավարության ներկայիս ակնկալիքները և գնահատականները կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

Ակնկալվող վարկային կորուստներ: Ընկերության վարկերի, դեբիտորական պարտքերի և համանման ակտիվների ակնկալվող վարկային կորուստների («ECL») չափման նպատակով Ընկերությունն օգտագործում է հիմնավորելի կանխատեսումային տեղեկատվություն, ներառյալ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներ: Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած տնտեսական կանխատեսումներում, այս կանխատեսումների գծով ևս՝ ենթադրությունները և դրանց տեղի ունենալու հավանականությունը բնորոշվում են անորոշության բարձր աստիճանով, ուստի փաստացի արդյունքները կարող են էապես տարբերվել կանխատեսումներից: Ծանոթագրություն 11-ը ներկայացնում է լրացուցիչ տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է Ընկերությունը կանխատեսումային տեղեկատվությունը արտացոլել ակնկալվող վարկային կորուստների («ECL») մոդելներում:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում

Պատրաստման հիմունքները. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան, սկզբնական արժեքի հիմունքով: Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև: Տվյալ սկզբունքները հետևողականորեն կիրառվել են հաշվետու բոլոր ժամանակահատվածներում, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան, պահանջում է հաշվապահական հաշվառման էական գնահատումներ: Այն նաև պահանջում է ղեկավարությանը կիրառել իրենց դատողությունները Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ: Այն ոլորտները, որոնք ընդգրկում են դատողությունների կամ բարդության ավելի բարձր աստիճան, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատականները էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

Արտարժույթի փոխարկում. Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և Ընկերության հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ հայկական դրամը (այսուհետ՝ «ՀՀ դրամ»):

Դրամական ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») պաշտոնական փոխարժեքով: Գործարքների վճարումները կատարելու և դրամական ակտիվները և պարտավորությունները տարեվերջի դրությամբ ՀՀ ԿԲ պաշտոնական փոխարժեքով ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու արդյունքում ստացված արտարժույթի փոխարկումից շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Տարեվերջի դրությամբ փոխարժեքով փոխարկումը չի կիրառվում ոչ դրամական հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են սկզբնական արժեքով:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար օգտագործվող հիմնական փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար = 522.59 ՀՀ դրամ, 1 եվրո = 641.11 ՀՀ դրամ, 1 շվեյցարական ֆրանկ = 590.83 ՀՀ դրամ, 1 ռուբլի = 7.02 ՀՀ դրամ (2019թ.՝ 1 ԱՄՆ դոլար = 479.70 ՀՀ դրամ, 1 եվրո = 537.26 ՀՀ դրամ, 1 շվեյցարական ֆրանկ = 493.16 ՀՀ դրամ, 1 ռուբլի = 7.77 ՀՀ դրամ):

Հիմնական միջոցներ. Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման պահուստը, եթե վերջինս պահանջվում է:

Վերանորոգման և պահպանման գծով ընթացիկ ծախսումները ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում: Հիմնական միջոցների միավորների խոշոր հիմնամասերի կամ բաղադրիչների փոխարինման ծախսումները կապիտալացվում են, միաժամանակ փոխարինման ենթակա մասերի դուրսգրմամբ:

Հասույթը հաշվեկշռային արժեքի հետ համեմատելու արդյունքում որոշված՝ օտարումից շահույթը կամ վնասը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում՝ այլ գործառնական եկամտի կամ ծախսերի բաժնում:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Մաշվածություն. Անավարտ շինարարության համար մաշվածություն չի հաշվարկվում: Շարժակազմի մաշվածությունը հաշվարկվում է՝ օգտագործելով արտադրական մեթոդը: Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ օգտակար ծառայության ժամկետի ընթացքում հավասարաչափ նվազեցնելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը:

	<u>Օգտակար ծառայություն՝ արտահայտված տարիներով</u>
Շենքեր և շինություններ	30 – 60
Մեքենաներ և սարքավորումներ	7
Փոխադրամիջոցներ	10
Արտադրական սարքավորումներ և հարմարանքներ	10
Գրասենյակային սարքավորումներ	3
Այլ	10

Ակտիվի մնացորդային արժեքը այն գնահատված գումարն է, որն Ընկերությունը ներկա պահին կստանար ակտիվի օտարումից՝ հանած օտարման գնահատված ծախսումները, եթե ակտիվն արդեն լիներ դրա օգտակար ծառայության վերջում ակնկալվող տարիքի և վիճակի: Ակտիվի մնացորդային արժեքը և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ոչ նյութական ակտիվներ. Ընկերության ոչ նյութական ակտիվներն ունեն որոշյալ օգտակար ծառայության ժամկետ և գլխավորապես ներառում են կոնցեսիոն իրավունքները և կապիտալացված համակարգչային ծրագրային ապահովումը:

Ձեռք բերված համակարգչային ծրագրային ապահովման արտոնագրերը կապիտալացվում են, հաշվի առնելով այն ծախսումները, որոնք կատարվել են դրանք ձեռք բերելու և շահագործման մեջ դնելու համար:

Ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային մեթոդով դրանց օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

	<u>Օգտակար ծառայություն՝ արտահայտված տարիներով</u>
Կոնցեսիոն իրավունքներ	Կոնցեսիոն համաձայնությունների և հաստատված օգտակար ծառայության նվազագույն տևողությունը
Ծրագրի ապահովում	10
Այլ ոչ նյութական ակտիվներ	5

Արժեզրկվելիս, ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև հետևյալ արժեքներից առավելագույնը՝ օգտագործման արժեք կամ իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

Կոնցեսիոն պայմանագրի նկատմամբ կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները. Ընկերությունը հանդիսանում է կոնցեսիոն պայմանագրում օպերատորը և որպես օպերատոր Ընկերությունը կառուցում և արդիականացնում է երկաթուղային ենթակառուցվածքը, մատուցում է բեռների փոխադրման և ուղևորափոխադրման ծառայություններ: Ընկերությունը հատուցվում է իր կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց կոնցեսիոն համաձայնագրի գործողության ընթացքում հանրային ծառայության օգտագործողներից գումար գանձելու իրավունք ստանալու միջոցով:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Հայաստանի Հանրապետությունը, որպես կոնցեդենտ, իրավունք ունի վերահսկել ենթակառուցվածքի օգտագործումը և, հետևաբար, համաձայնագիրը համարվում է ծառայությունների մատուցման կոնցեսիոն համաձայնագիր, եթե բավարարվում են հետևյալ երկու պայմանները

- կոնցեդենտը վերահսկում կամ կարգավորում է, թե ինչպիսի ծառայություններ պետք է մատուցի օպերատորը ենթակառուցվածքի օբյեկտի օգտագործմամբ, ում նա պետք է մատուցի այդ ծառայությունները և ինչ գնով, և
- կոնցեդենտը սեփականության միջոցով, սեփականության իրավունքից բխող իրավունքով կամ այլ կերպ վերահսկում է ենթակառուցվածքի գծով ցանկացած նշանակալի մնացորդային շահ համաձայնության ժամկետի ավարտին:

Վերը նշվածը կիրառելի է նաև այն դեպքում, երբ Ընկերությունն ունի ենթակառուցվածքների սեփականության իրավունք:

Զգալի մնացորդային մասնաբաժնի չափանիշը պահպանվում է այն դեպքում, երբ կոնցեդենտն ունի օբյեկտի օգտագործման մշտապես գործող իրավունք՝ համաձայնագրի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում և սահմանափակում է ենթակառուցվածքի տվյալ օբյեկտը վաճառելու կամ գրավով հանձնելու Ընկերության գործնական հնարավորությունը: Ենթակառուցվածքում մնացորդային շահն իրենից ներկայացնում է ենթակառուցվածքի գնահատված ընթացիկ արժեքն այնպես, ինչպես եթե այն լիներ արդեն այն տարիքի և այն վիճակում, ինչպիսին ակնկալվում է համաձայնության ժամանակաշրջանի ավարտին:

Ընկերության կողմից կնքված կոնցեսիոն պայմանագիրը համապատասխանում է վերոնշյալ չափանիշներին և հաշվի է առնվում ՖՀՄԿ 12 «Ծառայության կոնցեսիայի համաձայնություններ» համաձայն:

Կոնցեսիոն պայմանագրի պայմանները. Կոնցեսիոն պայմանագիրը Ընկերության և Հայաստանի Հանրապետության միջև կնքվել է 2008 թվականին 30 տարով, որը կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող է երկարաձգվել ևս 10 տարով:

Պայմանագրի կնքման պահին Ընկերությունը ենթակառուցվածքների օգտագործման իրավունքի ապահովման նպատակով կոնցեսիայի մուտքի միանվագ վճարում է կատարել Հայաստանի Հանրապետությանը՝ 1,700,000 հազ. ՀՀ դրամի չափով: Ընկերությունը պարտավորվել է նաև Հայաստանի Հանրապետությանը վճարել տարեկան փոփոխական կոնցեսիոն վճար, որը հաշվարկվում է որպես համախառն եկամուտների 2%, բացառությամբ ուղևորափոխադրումներից, փոխարժեքային տարբերություններից և կոնցեսիոն ակտիվների բարելավման ծառայություններից եկամուտների:

Կոնցեսիոն պայմանագրի պայմանների համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է 174,559,900 հազ. ՀՀ դրամի ներդրում կատարել ենթակառուցվածքի բարելավման մեջ, այդ թվում՝ 122,349,800 հազ. ՀՀ դրամի ներդրում ենթակառուցվածքներում և 52,210,100 հազ. ՀՀ դրամի ներդրում շարժակազմում:

Ընկերության կողմից կոնցեդենտից ձեռք բերված շարժակազմը (գնացքաքրշեր, վագոններ և այլն) չի հաշվառվում ՖՀՄԿ 12 «Ծառայության կոնցեսիայի համաձայնություններ»-ի պարզաբանման համաձայն, քանի որ Ընկերությունն իրավունք ունի դրանք վաճառել մինչև պայմանագրի գործողության ավարտը: Ընկերությունը հաշվառում է շարժակազմը որպես հիմնական միջոցներ:

2016-2038թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունը սուբսիդավորում է (մասնակիորեն փոխհատուցում է) ուղևորափոխադրումների տարեկան վնասի 30%-ը, որը չի կարող գերազանցել կամ հավասար լինել տվյալ տարվա համար հայտարարված կոնցեսիոն փոփոխական տարեկան վճարի գումարին:

Շինարարական ծառայությունների վերաբերյալ ոչ նյութական ակտիվի ձանաչում, գնահատում և ներկայացում: Ընկերությունը ոչ նյութական ակտիվն ի սկզբանե գնահատում է ինքնարժեքով, որը որոշվում է՝ հղվելով մատուցված շինարարական ծառայությունների վաճառքի առանձին գնի վրա: Սկզբնական ձանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է ինքնարժեքով՝ հանած կուտակված մաշվածությունն ու արժեզրկումից կորուստները:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Ոչ նյութական ակտիվի արժեքը սկզբնական ճանաչման դեպքում ներառում է Հայաստանի Հանրապետությանը կատարած կոնցեսիայի մուտքի միանվագ վճարման գումարը՝ 1,700,000 հազ. ՀՀ դրամի չափով, որը կապիտալացվել է որպես կոնցեսիոն իրավունք: Տարեկան փոփոխական կոնցեսիոն վճարը, որը հաշվարկվում է որպես համախառն եկամուտների 2% տոկոս, բացառությամբ ուղևորափոխադրումներից, փոխարժեքային տարբերություններից և կոնցեսիոն ակտիվների բարելավման ծառայություններից եկամուտների, կապիտալացվում է ոչ նյութական ակտիվի արժեքի մեջ տրանսպորտային ծառայությունների մատուցման և համապատասխան եկամուտների ճանաչման ժամանակ:

Ոչ նյութական ակտիվն ամորտիզացվում է գծային մեթոդով կոնցեսիոն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում: Ընկերությունը սկսում է ամորտիզացնել ոչ նյութական ակտիվը, երբ այն հասանելի է դառնում օգտագործման համար, այսինքն այն պահին, երբ Ընկերությունը, լիցենզիայի միջոցով, հանրային ծառայության օգտագործողներից գումար գանձելու իր իրավունքն է իրականացնում: Ընկերությունը ենթադրում է, որ ոչ նյութական ակտիվի մնացորդային արժեքը զրոյական է: Ոչ նյութական ակտիվի արժեզրկումը չափվում է համաձայն ՀՀՄՍ 36-ի «Ակտիվների արժեզրկում» ընդհանուր ուղեցույցի:

Համապատասխան ոչ նյութական ակտիվը հանդիսանում է Ընկերության պայմանագրով նախատեսված ակտիվ, այսինքն՝ Ընկերության կողմից շինարարական ծառայությունների դիմաց հատուցում ստանալու կուտակվող իրավունք և Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում դասակարգվում է որպես ոչ նյութական ակտիվ:

Սպասարկման պարտավորություններ: Ընկերությունը ներառում է վերանորոգման ընթացքում կատարված ցանկացած արդիականացման ծառայությունների իրական արժեքը ոչ նյութական ակտիվի արժեքի և մատուցված ծառայություններից ստացված հասույթի մեջ: Ընթացիկ վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծախսերը ճանաչվում են որպես ծախսեր՝ դրանց առաջացման պահին:

Վնասների հատուցումը Հայաստանի Հանրապետության կողմից՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության: Ընկերությունը ճանաչում է դերիտորական պարտքերը համաձայն ՖՀՄՍ 9-ի «Ֆինանսական գործիքներ» և ուղևորափոխադրումներից վնասի փոխհատուցումից առաջացած համապատասխան այլ եկամուտները, երբ ծառայությունը մատուցվել է, փոխհատուցման գումարը որոշվել է և Ընկերությունն ունի ողջամիտ հավաստիացում գումարի ստացման վերաբերյալ:

Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում. Ոչ նյութական ակտիվները, որոնք ենթակա չեն ամորտիզացիայի, ենթարկվում են տարեկան ստուգումների արժեզրկման համար: Արժեզրկման և ամորտիզացման ենթակա ակտիվները դիտարկվում են արժեզրկման, երբ իրադարձությունների կամ փոփոխությունների հանգամանքները վկայում են, որ հաշվեկշռային արժեքը չի կարող լինել փոխհատուցվող: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է այն չափով, ըստ որի ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը: Փոխհատուցվող գումարը հանդիսանում է ակտիվի իրական արժեքի և օտարման ծախսումների տարբերության և օգտագործման արժեքի առավել բարձրը: Արժեզրկման գնահատման նպատակների համար ակտիվները խմբավորվում են նվազագույն մակարդակի, որի համար կան հիմնականում անկախ դրամական ներհոսքեր (դրամաստեղծ միավորներ): Ոչ ֆինանսական ակտիվների նախնական արժեզրկումը (բացառությամբ գուղվիլի) վերանայվում է հնարավոր փոփոխման յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվներ. Ոչ ընթացիկ ակտիվները դասակարգված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ», եթե դրանց հաշվեկշռային արժեքը վերականգնվում է վաճառքի միջոցով հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում: Ակտիվները վերադասակարգվում են, երբ առկա են հետևյալ բոլոր պայմանները՝ (ա) ակտիվներն առկա են անմիջապես վաճառքի համար իրենց ընթացիկ վիճակում, (բ) Ընկերության ղեկավարությունը հաստատել և սկզբնավորել է գնորդ գտնելու ակտիվ ծրագիր, (գ) ակտիվներն ակտիվորեն շուկայավարվում են ողջամիտ գնով վաճառքի համար, (դ) վաճառքն ակնկալվում է մեկ տարվա ընթացքում և (ե) քիչ հավանական է, որ վաճառքի պլանում տեղի կունենան նշանակալի փոփոխություններ կամ որ պլանը չեղյալ կհամարվի:

Ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվները չեն վերադասակարգվում կամ վերաներկայացվում ֆինանսական վիճակի մասին համեմատական հաշվետվությունում՝ ընթացիկ ժամանակաշրջանի վերջի դրությամբ դասակարգումն արտացոլելու համար:

Ֆինանսական գործիքներ. հիմնական չափանի մտեցումները: Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության դիմաց, շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի արդյունքում: Իրական արժեքի ամենարժանահավատ վկայություն է հանդիսանում ակտիվ շուկայում գնանշվող գինը: Ակտիվ շուկան այն շուկան է, որում շարունակական հիմունքով տեղի են ունենում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները՝ անհրաժեշտ գնային տեղեկատվություն ապահովելու համար բավարար հաճախականությամբ և ծավալով: Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է որպես առանձին ակտիվի կամ պարտավորության գնանշվող շուկայական գնի և Ընկերության կողմից պահվող գործիքների քանակության արտադրյալ: Նշվածը տեղի է ունենում նույնիսկ այն դեպքում, երբ շուկայի սովորական օրական առքուվաճառքի ծավալը բավարար չէ այդ քանակությունը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու հայտի ներկայացումը կարող է ազդել գնանշվող գնի վրա:

Ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչումը: Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները սկզբնական ճանաչման պահին ենթակա են ճանաչման իրական արժեքով: Բոլոր այլ ֆինանսական գործիքները սկզբնապես արտացոլվում են իրական արժեքով, ներառյալ գործարքի գծով ծախսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի առավել արժանահավատ վկայություն է համարվում գործարքի գինը: Սկզբնական ճանաչման պահին շահույթ կամ վնաս ճանաչվում է միայն իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության դեպքում, որի մասին վկայություն կարող են հանդիսանալ նույն գործիքի գծով շուկայում դիտարկելի այլ ընթացիկ գործարքները կամ այնպիսի չափման մոդելը, որը ելակետային տվյալների համար հիմք է ընդունում միայն դիտարկելի շուկայական տվյալներ: Սկզբնական ճանաչումից հետո ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող պարտքային գործիքներում ներդրումների համար ճանաչվում է ակնկալվող վարկային կորուստների գնահատված պահուստ, որը ակտիվի սկզբնական ճանաչումից անմիջապես հետո հանգեցնում է հաշվապահական վնասի ճանաչման:

Ֆինանսական ակտիվների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում («ստանդարտ պայմաններով») առք ու վաճառքի գործարքներ) ճանաչվում են գործարքի ամսաթվով, այսինքն այն ամսաթվով, երբ Ընկերությունը պարտավորվում է գնել կամ վաճառել ֆինանսական ակտիվը: Մնացած բոլոր գնման գործարքները ճանաչվում են այն ժամանակ, երբ Ընկերությունը սկսում է այդ ֆինանսական գործիքի մասով հանդես գալ որպես պայմանագրի կողմ:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. բիզնես մոդել: Բիզնես մոդելը արտացոլում է այն եղանակը, որով Ընկերությունը կառավարում է իր ակտիվները՝ դրամական հոսքերի հավաքման նպատակով. արդյոք Ընկերության նպատակն է՝ (i) ակտիվներից հավաքագրել միայն պայմանագրային դրամական հոսքերը («պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրման նպատակով»), թե (ii) ակտիվներից հավաքագրել և՛ պայմանագրային դրամական հոսքերը, և՛ ակտիվների վաճառքից առաջացող դրամական հոսքերը («պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրման և վաճառքի նպատակով»), կամ, եթե (i) կամ (ii) պարբերությունները կիրառելի չեն, ֆինանսական ակտիվները վերաբերում են «այլ» բիզնես մոդելներին և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական գործիքների վերադասակարգում: Ֆինանսական գործիքները վերադասակարգվում են միայն այն դեպքում, եթե ընդհանուր առմամբ փոփոխվում է տվյալ պորտֆելի կառավարման բիզնես մոդելը: Վերադասակարգումն իրականացվում է առաջընթաց կերպով՝ բիզնես մոդելի փոփոխությունից հետո առաջին հաշվետու ժամանակաշրջանի սկզբից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը: Ֆինանսական պարտավորությունները ներառվում են դասակարգման հետևյալ կատեգորիաներում՝ իրական արժեքով և ամորտիզացված արժեքով: Ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսական գործիքների համար պահանջվում է, կամ երբ Ընկերությունն ընտրել է «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» մեթոդը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը, բանկերում առկա ընթացիկ հաշիվները և պայմանագրով նախատեսված այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումներ՝ ոչ ավելի, քան երեք ամիս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Դրական և բացասական փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են ցպահանջ ավանդների գծով, դասակարգվում են գործառնական գործունեության գծով դրական կամ բացասական փոխարժեքային տարբերությունների կազմում:

Սահմանափակ օգտագործման կարճաժամկետ ակտիվներ. Սահմանափակ օգտագործման կարճաժամկետ ակտիվները ներկայացնում են ավանդային ենթահաշվին պահվող Ընկերության միջոցները (մեկ միասնական հաշիվ), որը վերահսկում է Պետական գանձարանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմինը, հարկային օրենսգրքով սահմանված դեպքերում հարկ վճարողների հարկային պարտավորությունները մարելու նպատակով:

Մույն գումարը չի հաշվառվում որպես Ընկերության ապագա հարկային պարտավորությունների գծով կանխավճար, քանի որ միասնական հաշվին գտնվող գումարները ենթակա են վերադարձման հարկատուին, հարկային մարմինների կողմից սահմանված ձևաչափով և կարգով լրացված դիմումի հիման վրա:

Ժամկետային ավանդներ. Ժամկետային ավանդները կազմված են բանկերում պահվող երեք ամսից ավել սկզբնական մարման ժամկետով ավանդներից: Ժամկետային ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր նախնական ճանաչվում են իրական արժեքով և հետագայում ներկայացվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների արժեզրկում. ակնկալվող վարկային կորուստների գնահատված պահուստ:

Կանխատեսումների հիման վրա Ընկերությունը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող, և իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող պարտքային գործիքների, ինչպես նաև վարկերի տրամադրման հետ կապված պարտավորություններից և ֆինանսական երաշխիքի պայմանագրերից բխող ռիսկերի գծով ակնկալվող վարկային կորուստները: Ընկերությունը գնահատում է ակնկալվող վարկային կորուստները և ճանաչում ակնկալվող վարկային կորուստների գնահատված պահուստ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ակնկալվող վարկային կորուստների գնահատումը արտացոլում է, i) անաչառ և հավանականությամբ կշռված գումարը, որը որոշվում է հնարավոր արդյունքների տիրույթի գնահատման միջոցով, (ii) փողի արժեքը ժամանակի մեջ, և (iii) անցյալ իրադարձությունների, ընթացիկ պայմանների և կանխատեսվող ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ ողջ հիմնավոր և հավաստի տեղեկությունները, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի են առանց անհարկի միջոցների և ռեսուրսների ծախսման:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները ներկայացվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ հանած ակնկալվող վարկային կորուստների գնահատված պահուստը: Վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների համար ակնկալվող վարկային կորուստների պահուստը ճանաչվում է առանձին՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով որպես պարտավորություն: Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող պարտքային գործիքների ամորտիզացված արժեքի փոփոխությունները, առանց ակնկալվող վարկային կորուստների, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունները արտացոլվում են այլ համապարփակ եկամտում՝ «եկամուտներ՝ հանած այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով ծախսերը» տողում:

Առևտրային դեբիտորական պարտքերի և վարձակալության գծով դեբիտորական պարտքերի դիմաց Ընկերությունը կիրառում է արժեզրկման հաշվառման պարզեցված մոդելը: Մնացած ֆինանսական ակտիվների համար Ընկերությունը կիրառում է «եռափուլ» արժեզրկման մոդել, որի հիմքում ընկած են նախնական ճանաչումից ի վեր տեղի ունեցած վարկի որակական փոփոխությունները: Ֆինանսական գործիքը, որը սկզբնական ճանաչման պահին արժեզրկված չէ, դասակարգվում է Փուլ 1-ում:

Փուլ 1-ի ֆինանսական ակտիվների համար ակնկալվող վարկային կորուստները չափվում են ակտիվի ողջ տևողության ընթացքում ակնկալվող վարկային կորուստների այն մասի չափով, որը կարող է առաջանալ դեֆոլտների արդյունքում, որոնք կարող են տեղի ունենան առաջիկա 12 ամսվա ընթացքում կամ մինչև պայմանագրային մարման ժամկետը, եթե վերջինս սահմանված է ավելի վաղ, քան 12-ամսյա ժամկետի լրանալը («12-ամսյա ժամկետում ակնկալվող վարկային կորուստներ»): Եթե Ընկերությունը սկզբնական ճանաչումից ի վեր արձանագրում է վարկային ռիսկի զգալի աճ, ապա ակտիվը տեղափոխվում է 2-րդ փուլ, և այս ակտիվի գծով ակնկալվող վարկային կորուստները չափվում են ամբողջ ժամկետի ընթացքում, այսինքն՝ մինչև պայմանագրային մարման ժամկետը ակնկալվող վարկային կորուստների հիման վրա, մինչև ժամանակ հաշվի առնելով ակնկալվող կանխավճարը, եթե այդպիսին նախատեսված է («ամբողջ ժամկետում ակնկալվող վարկային կորուստներ»): Եթե Ընկերությունը որոշում է, որ ֆինանսական ակտիվը արժեզրկվել է, ակտիվը տեղափոխվում է 3-րդ փուլ և դրա գծով ակնկալվող վարկային կորուստները չափվում են որպես ամբողջ ժամկետում ակնկալվող վարկային կորուստներ: Ձեռք բերված կամ ստեղծված՝ վարկային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար ակնկալվող վարկային կորուստները միշտ չափվում են որպես ամբողջ ժամկետում ակնկալվող վարկային կորուստներ:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների դուրսգրում: Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ Ընկերությունը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Ընկերությունը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ Ընկերությունը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր. Առևտրային պարտքերը հաշվեգրվում են, երբ գործընկերը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտականությունները, և հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Շահութահարկ. Շահութահարկը ներկայացվում է ֆինանսական հաշվետվություններում համաձայն օրենսդրության, որն, ըստ էության, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

Ընթացիկ հարկն այն գումարն է, որը ենթակա է վճարման կամ հարկային մարմիններից փոխհատուցման, և վերաբերում է ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթներին կամ վնասներին: Հարկվող շահույթի կամ վնասի համար հիմք են հանդիսանում գնահատումները, եթե ֆինանսական հաշվետվությունները վավերացվել են նախքան համապատասխան հարկային հաշվետվություններ ներկայացնելը: Հարկերը, բացառությամբ շահութահարկի, ճանաչվում են գործառնական ծախսերում:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են կիրառելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը հետագա տարիներին փոխանցվող հարկային վնասի և ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առկա են ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող արժեքները համեմատելիս:

Համաձայն սկզբնական ճանաչման վերաբերյալ բացառության, հետաձգված հարկը չի գրանցվում այն ժամանակավոր տարբերությունների դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը կատարվում է այնպիսի գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը սկզբնապես գրանցվելիս ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական, և ո՛չ էլ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկային մնացորդները չափվում են՝ կիրառելով հարկային դրույքները, որոնք, ըստ էության, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և որոնք ակնկալվում է կիրառել այն ժամանակահատվածներում, երբ ժամանակավոր տարբերությունները հակադարձվեն կամ նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասն օգտագործվի:

Անորոշ հարկային դիրքեր. Ընկերության անորոշ հարկային դիրքերը գնահատվում են Դեկլարարության կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Պարտավորությունների գրանցման համար շահութահարկի դիրքերը գնահատվում են դեկլարարության կողմից այնպես, որ դիրքերի վերանայումը հարկային մարմինների կողմից չառաջացնի լրացուցիչ հարկերի գանձման անհրաժեշտություն: Գնահատումը հիմնված է այն հարկային օրենքների և համապատասխան իրավական ակտերի մեկնաբանությունների վրա, որոնք, ըստ էության, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Տուգանքների, տոկոսների և հարկերի, բացառությամբ շահութահարկի, գծով պարտավորությունները ճանաչվում են դեկլարարության կողմից՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորությունների մարման համար պահանջվող ծախսերի լավագույն գնահատականը:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Ավելացված արժեքի հարկ. Վաճառքին վերաբերող ավելացված արժեքի հարկը ենթակա է վճարման հաճախորդներին ապրանքների հանձնման կամ ծառայությունների մատուցման ժամանակ: Գնմանը վերաբերող ԱԱՀ-ը սովորաբար հաշվանցվում է վաճառքին վերաբերող ԱԱՀ-ի դիմաց՝ ԱԱՀ-ի հարկային հաշիվը ստանալուց և վճարումը կատարելուց հետո:

Հարկային մարմինները թույլատրում են ԱԱՀ-ի վճարումը գուտ հիմունքով վաճառքին և գնումներին վերաբերող: ԱԱՀ-ի գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են համախառն հիմունքով և առանձին բացահայտվում են որպես ակտիվ և պարտավորություն: Դեբիտորական պարտքերի արժեզրկման համար պահուստ ստեղծելու դեպքում արժեզրկումից կորուստը ճանաչվում է պարտապանի համախառն գումարում, ներառյալ ԱԱՀ-ը:

Պաշարներ. Պաշարները չափվում են ինքնարժեքի իրացման գուտ արժեքի նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ գնահատված ծախսումները:

Կանխավճարներ. Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանելով արժեզրկման համար պահուստը: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ, երբ կանխավճարին վերաբերող ապրանքներն ու ծառայությունները ակնկալվում է ստանալ մեկ տարի հետո կամ երբ կանխավճարը վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման ժամանակ կդասակարգվի որպես ոչ ընթացիկ: Ակտիվներ ձեռք բերելու գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ Ընկերությունը ստանում է ակտիվի նկատմամբ վերահսկողություն և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն: Այլ կանխավճարները ծախսագրվում են շահույթի կամ վնասի կազմում, երբ կանխավճարի հետ կապված ապրանքը կամ ծառայությունը ստացվում է: Եթե կա այնպիսի հայտանիշ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվի, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

Կանոնադրական կապիտալ. Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն վերագրելի են նոր բաժնետոմսերի թողարկմանը, սեփական կապիտալում ցույց են տրվում որպես ստացված հասույթից նվազեցում՝ հարկումից հետո: Իրական արժեքի այն մասը, որը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, սեփական կապիտալում գրանցվում է որպես էմիսիոն եկամուտ:

Պահուստներ պարտավորությունների և վճարների համար. Պարտավորությունների և վճարների գծով պահուստները անորոշ ժամանակով և գումարով ոչ նյութական պարտավորություններ են: Դրանք հաշվեկրվում են, երբ Ընկերությունը, որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի իրավաբանորեն սահմանված կամ ենթադրվող պարտականություն, երբ հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք, և երբ պարտականության գումարի արժանահավատ գնահատականը կարելի է ստանալ: Պահուստները հաշվեկրվում են ներկայացված ծախսերի արժեքով, որոնք ինչպես ակնկալվում է, կպահանջվեն պարտավորությունները մարելու համար, օգտագործելով դրույքը մինչև հարկումը, որն արտացոլում է տվյալ պարտավորության հետ կապված փողի ժամանակային արժեքի և ռիսկերի շուկայական գնահատականները: Ժամանակի ընթացքում պահուստի աճը վերագրվում է տոկոսային ծախսերին:

Հասույթի ճանաչում. Փոփոխական հատուցում ներառող պայմանագրերից հասույթը ճանաչվում է միայն այն չափով, որը բարձր հավանականությամբ չի ենթարկվի զգալի նվազեցման: Հաճախորդների հետ պայմանագրերը չեն պարունակում ֆինանսավորման էական բաղադրիչներ: Հասույթը ներկայացված է առանց ԱԱՀ-ի և գեղչերի:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Պայմանագրերի գծով պարտավորությունները ձևաչափում են ծառայությունների մատուցման շրջանակներում ստացված կանխավճարների կազմում և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ընդգրկված են որպես առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի մաս: Բացի ոչ նյութական ակտիվներից, որոնք ձևաչափում են կոնցեսիոն պայմանագրերի շրջանակներում, Ընկերությունը հաճախորդների և պատվիրատուների հետ պայմանագրերից չունի էական ակտիվներ:

Այն դեպքերում, երբ պայմանագրի ֆինանսական արդյունքը չի կարող արժանահավատորեն գնահատվել (օրինակ՝ պայմանագրի սկզբնական փուլերում), Ընկերությունը ձևաչափում է հասույթը միայն այն չափով, որը չի գերազանցում կրած ծախսերը, այնքան ժամանակ, քանի դեռ Ընկերությունը չի կարող արժանահավատորեն ձևաչափել պայմանագրի ֆինանսական արդյունքը:

Ընկերությունը սահմանել է, որ միասնական կոնցեսիոն պայմանագրով մատուցում է երկու ծառայություն՝ շինարարության ու արդիականացման և շահագործման ծառայություններ: Գնորդի հետ պայմանագրի կատարման յուրաքանչյուր պարտավորության նկատմամբ Ընկերությունը կիրառում է ՖՀՄՍ 15-ի «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ձևաչափման չափանիշները:

Շինարարական և արդիականացման ծառայություններից ստացված եկամուտների ձևաչափում և գնահատում: Ընկերությունը սահմանում է շինարարության ու արդիականացման և շահագործման ծառայությունները, որպես առանձին պարտավորություններ և, հետևաբար, առաջանում են կատարման առանձին պարտականություններ: ՖՀՄՍ 15-ի դրույթներին համապատասխան, Ընկերությունը պարտավոր է պայմանագրում սահմանված յուրաքանչյուր պարտավորության համար բաշխել գործարքի գինը՝ վաճառքի առանձին գնի հիման վրա: Շինարարական ծառայությունների մատուցման համար Ընկերությունն առանձին հատուցում չի ստանում: Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Ընկերության հետ կնքել է միասնական պայմանագիր, որը սահմանում է շինարարության և արդիականացման ծախսերի ծավալը, ինչպես նաև նախատեսում է վերջնական գնորդներից հատուցում ստանալու Ընկերության իրավունքը: Շահագործման ծառայությունների դիմաց Ընկերությունը ստանում է հատուցում վերջնական գնորդների հետ առանձին պայմանագրերի կնքման և կատարման արդյունքում: Շինարարության և արդիականացման ծառայությունների վերաբերյալ գործարքի համապատասխան գինը, որը վերաբերում է կատարման պարտավորություններին որոշվում է նման ծառայությունների արժեքի գնահատման և համապատասխան մարժայի ավելացման միջոցով, եթե ծախսերի և մարժայի փոխհատուցումն ունի բարձր հավանականություն:

Այն դեպքում, երբ Ընկերությունն ի վիճակի չէ հիմնավորված գնահատել պարտավորության կատարման արդյունքը, սակայն ակնկալում է պարտավորության կատարման հետ կապված ծախսերի հատուցում, հասույթը ձևաչափում է միայն կրած ծախսերի չափով: Ընկերության կողմից 2008 թվականին կնքված կոնցեսիոն պայմանագրի առնչությամբ Ընկերությունը ձևաչափում է շինարարության և արդիականացման ծառայություններից հասույթը միայն կրած ծախսերի չափով:

Օգտատերերից հատուցման զանգվածային իրավունքն իրենից ներկայացնում է ոչ դրամական հատուցման ձև, որը Ընկերությունը ստանում է Հայաստանի Հանրապետությունից՝ շինարարական ծառայությունների մատուցման դիմաց:

Ընկերությունը ոչ դրամական հատուցումը գնահատում է իրական արժեքով: Ընկերությունը իրական արժեքը չափվում է անուղղակիորեն՝ մատուցված շինարարական ծառայությունների գծով վաճառքի առանձին գնից ելնելով:

Ընկերությունը ձևաչափում է շինարարության ծառայությունների մատուցումից ստացված հասույթը՝ ելնելով շինարարության ընթացքում պայմանագրի կատարման աստիճանից: Ընկերությունը չափում է առաջընթացը՝ ելնելով կատարման տոկոսից՝ շինարարության ընդհանուր ծախսերի համեմատ կրած ծախսերի հիման վրա, քանի որ այս մեթոդն արտացոլում է Ընկերության առաջընթացը ենթակառուցվածքի շինարարության և արդիականացման համար իր պարտականությունների կատարման գծով:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Շահագործման ծառայություններից ստացված եկամուտների ճանաչում և գնահատում: Վերջնական գնորդներին ծառայությունների մատուցման պարտավորությունը կարգավորվում է Ընկերության և վերջնական գնորդների միջև կնքվող առանձին պայմանագրերով:

Այս պայմանագրերն առանձին վերլուծվում են՝ համաձայն ՖՀՄՄ 15-ի «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ», և գործառնական ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է այդ պայմանագրերի պայմանների համաձայն: Գործառնական ծառայությունների հետ կապված եկամուտներն ու ծախսերը հաշվառվում են ՖՀՄՄ 15-ի «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ընդհանուր դրույթներին համապատասխան (Ծանոթագրություն 17):

Բեռնափոխադրման և առաքման ծառայություններ: Ընկերությունը ճանաչում է բեռնափոխադրման և առաքման ծառայությունների գծով հասույթը՝ հաշվետու ամսաթվի դրությամբ փոխադրման ծառայությունների ավարտի մակարդակին համամասնորեն, պայմանով, որ փոխադրման ծառայությունների ավարտի մակարդակը և եկամտի գումարը կարող են որոշվել հուսալիության բավարար աստիճանով: Փոխադրման ծառայությունների ավարտի աստիճանը հաշվարկվում է որպես տվյալ ամսաթվի դրությամբ մատուցված ծառայությունների ծավալի և ծառայությունների ընդհանուր ծավալի տոկոսային հարաբերակցություն:

Ուղևորափոխադրում: Ուղևորափոխադրումներից ստացված հասույթը ներառում է ծառայություններ, որոնք մատուցվում են Ընկերության կողմից մերձքաղաքային և հեռահար ուղղություններով ուղևորափոխադրումների, հեռահար ուղղություններով ուղեբեռի տեղափոխման և այլ հարակից ծառայությունների գծով: Ընկերությունը ճանաչում է հեռահար ուղղություններով ուղևորափոխադրման ծառայությունների գծով հասույթն ամբողջությամբ՝ փոխադրման ծառայությունների մատուցման մեկնարկի դրությամբ, իսկ մերձքաղաքային ուղղություններով ուղևորների փոխադրման ծառայությունների գծով հասույթն ամբողջությամբ՝ ճամփորդական փաստաթղթի վաճառքի դրությամբ:

Կայարանային ծառայություններ: Կայարանային ծառայություններից ստացված հասույթը ներառում է բեռների մշակման հետ կապված կայանով մատուցվող ծառայությունները՝ նախքան դրանց բեռնումը և դրանց բեռնաթափումից հետո: Ընկերությունը ճանաչում է կայարանային ծառայությունների գծով հասույթը պարտավորության կատարման պահին՝ ծառայության մատուցման ավարտին համաչափ՝ հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հատուցումներ աշխատակիցներին. Աշխատավարձը, Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային և սոցիալական ապահովության ֆոնդերին հատկացումները, տարեկան վճարովի արձակուրդը, հիվանդության պատճառով բացակայությունը և պարգևավճարները հաշվեգրվում են այն տարում, երբ տվյալ հատուցումները որոշող համապատասխան ծառայությունները մատուցվել են Ընկերության աշխատակիցների կողմից: Ընկերությունն ունի իրավական պարտավորություն սահմանված վճարումներով կենսաթոշակային ծրագրերի նկատմամբ: Այդ ծրագրերի գծով Ընկերության պարտավորությունները ներկայացված են ակնկալվող վճարումների գեղջված գումարներով, որոնք ճշգրտվում են չճանաչված ակտուարական շահույթով/վնասով և նախկինում չճանաչված ծառայությունների գծով ծախսումներով:

Նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող ծառայությունների գծով ծախսերը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, վճարումների այն մասով, որոնց ստացման իրավունքն արդեն իսկ ձեռք է բերվել, իսկ մնացած գումարն ամորտիզացվում է՝ օգտագործելով գծային մեթոդը այն ժամանակահատվածում, որը նախորդում է վճարումների ստացման իրավունքների ձեռքբերմանը:

Հաշվետվություններ ըստ սեզոնների. Հաշվետվություններն ըստ սեզոնների կազմվում են Ընկերության գործառնական կառավարման բարձրագույն մարմնի ներկայացվող ներքին հաշվետվություններին համապատասխան: Ընկերության գործառնական կառավարման բարձրագույն մարմինը պատասխանատու է միջոցների հատկացման և գործող սեզոնների գնահատման կատարման համար: Այն սեզոնները, որոնց հասույթը, շահույթը կամ ակտիվները կազմում են բոլոր սեզոնների տասը տոկոսը կամ ավելին, ներկայացվում են առանձին հաշվետվությամբ:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Ֆինանսական հաշվետվություններին ներկայացման փոփոխություններ. Սույն ֆինանսական հաշվետվություններին հրապարակումից հետո, ֆինանսական հաշվետվություններում փոփոխությունների իրականացումը թույլատրվում է միայն Ընկերության ղեկավարության հավանությամբ, որը հաստատել է այդ ֆինանսական հաշվետվությունները հրապարակման համար:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման էական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումներն ու դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են Ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատումներից բացի, Ղեկավարությունը կատարում է նաև որոշակի դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում:

Դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչում. Ճանաչված հետաձգված հարկային ակտիվները ներկայացնում են փոխհատուցման ենթակա եկամտահարկը հարկվող շահույթի ապագա պահումների միջոցով և արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հետաձգված հարկերի ակտիվների ճանաչումը հաշվառվում է միայն այն դեպքում, եթե հարակից հարկային շահի իրացումը հավանական է:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների հաշվանցում հնարավոր է այն դեպքում, երբ օրենսդրությունը նախատեսում է ընթացիկ հարկային ակտիվների և պարտավորությունների հաշվանցման իրավունք, և երբ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը հաշվարկվում է միննույն հարկային մարմնի կողմից միևնույն հարկատուի նկատմամբ, կամ տարբեր հարկատուների նկատմամբ, երբ առկա է փոխադարձ հաշվանցման միջոցով վերջնահաշվարկ կատարելու մտադրություն:

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվները ներկայացնում են շահութահարկի այն գումարը, որը կարող է հաշվանցվել ապագա հարկվող շահույթից նվազեցումների դիմաց և ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա համապատասխան հարկային արտոնության իրացման բարձր հավանականություն: Սա ենթադրում է ժամանակավոր տարբերությունների առկայություն, որոնք ակնկալվում է հակադարձել ապագայում, և բավարար ապագա հարկվող շահույթ, որոնց դիմաց ակնկալվում է օգտագործել նվազեցումները: Ապագա հարկվող շահույթի և ապագայում ամենայն հավանականությամբ հաշվանցման ենթակա հարկային նվազեցումների չափը որոշվում է ղեկավարության կողմից մշակված միջնաժամկետ բիզնես պլանի և ապագայի նկատմամբ դրա արտարկման /էքստրապոլյացիայի/ արդյունքների հիման վրա: Բիզնես պլանը հիմնված է ղեկավարության տվյալ հանգամանքներում հիմնավորված ակնկալիքների վրա:

Կասպակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում. Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը գործարքի մեջ է մտնում իր կասպակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում՝ հիմնված նրանց իրական արժեքի վրա: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատված են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա ակտիվ շուկա այդպիսի գործարքների համար:

Դատողության համար հիմք է հանդիսանում նմանատիպ գործարքների գնահատումը չկասպակցված կողմերի հետ և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման էական գնահատումներ և դատողություններ (շարունակություն)

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը մասնագիտական դատողությունի արդյունք է՝ հիմնված համանման ակտիվների փորձի վրա: Հետագա տնտեսական շահույթը՝ ամրագրված ակտիվներին, սպառվում են հիմնականում օգտագործման միջոցով: Մինչև այլ գործոնների առկայությունը, ինչպիսիք են տեխնոլոգիական կամ առևտրային տեսանկյունից հնեցումը, ինչպես նաև սարքավորումների մաշվածությունը, հաճախ հանգեցնում են այդ ակտիվների հետ կապված տնտեսական օգուտների նվազմանը: Ղեկավարությունը գնահատում է օգտակար ծառայության մնացած ժամկետը՝ համաձայն ակտիվների տեխնիկական վիճակի և հաշվարկային ժամանակահատվածի, որի ընթացքում ակնկալվում է ակտիվներից ստանալ շահույթ Ընկերության համար: Հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները՝ ա) ակտիվների ակնկալվող օգտագործումը, բ) սարքավորումների ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը, որը կախված է շահագործման բնութագրիչներից և սպասարկման ծրագրից և գ) տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, որն առաջանում է շուկայի պայմանների փոփոխություններից:

Եթե ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ղեկավարության կողմից գնահատված ժամկետներից տարբերվեին 10%-ով, մաշվածության վրա ազդեցությունը կաճեր կամ կնվազեր 103,212 հազ. ՀՀ դրամով 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում (2019 թ. կաճեր կամ կնվազեր 111,982 հազ. ՀՀ դրամով):

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

ՖՀՄՍ 16-ի փոփոխություն. COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնություններ- (թողարկվել է 2020 թ. մայիսի 28-ին ուժի մեջ են մտնում 2020թ. հունիսի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությամբ վարձակալներին տրվում է հայեցողական հնարավորություն որոշելու, թե արդյոք COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնությունները հանդիսանում են վարձակալության պայմանների փոփոխություն: Վարձակալները կարող են իրենց հայեցողությամբ վարձավճարների գծով արտոնությունների չափումը իրականացնել այնպես, ինչպես եթե դրանք չհանդիսանային վարձակալության պայմանների փոփոխություն: Գործնական նպատակահարմարությամբ պայմանավորված այս լուծումը վերաբերում է միայն այն վարձավճարների գծով արտոնություններին, որոնք ուղղակիորեն հանդիսանում են COVID-19 համավարակի հետևանք, և միայն այն դեպքում, եթե բավարարված են հետևյալ բոլոր պայմանները. վարձավճարներում փոփոխությունները հանգեցնում են վարձակալության դիմաց հատուցման այնպիսի վերանայման, որ այն ըստ էության հավասար լինի, կամ չգերազանցի վերանայումից անմիջապես առաջ վարձակալության դիմաց հատուցման գումարը. վարձավճարների ցանկացած նվազեցում ազդում է միայն 2021թ.հունիսի 30-ից ոչ ուշ վճարման ենթակա վճարումների վրա. և վարձակալության այլ պայմանների մեջ տեղի չեն ունենում էական փոփոխություններ:

Ստորև թվարկված վերանայված ստանդարտների կիրառումն Ընկերության համար պարտադիր է՝ սկսած 2020թ. հունվարի 1-ից, սակայն դրանք էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության վրա.

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքների փոփոխություններ (թողարկված են 2018թ. մարտի 29-ին և ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):
- Բիզնեսի սահմանում. ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ (թողարկված են 2018թ. հոկտեմբերի 22-ին և գնումների մասով ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):
- Նյութականության որոշում. ՀՀՄՍ 1-ի և ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ (թողարկված են 2018 թ. հոկտեմբերի 31-ին և ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)

- Բազային տոկոսադրույքի բարեփոխում. ՖՀՄՍ 9-ի, ՀՀՄՍ 39-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ (թողարկված են 2019 թ. սեպտեմբերի 26-ին և ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

6 Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ

Թողարկվել են նոր ստանդարտներ և մեկնաբանումներ, որոնք պարտադիր են 2021թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և որոնք Ընկերությունն ավելի վաղ չի ընդունել:

«Ակտիվների վաճառք կամ հատկացում՝ ներդրողի և ստացիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության միջև». ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի փոփոխություններ (հրապարակվել է 2014թ. սեպտեմբերի 11-ին և ուժի մեջ են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից սահմանված ամսաթվից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխությունները վերաբերում են ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև առկա հակասություններին, որոնք վերաբերում են ակտիվների վաճառքին կամ ներդրմանը՝ ներդրողի և ստացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության միջև: Փոփոխությունների հիմնական հետևանքն է, որ ամբողջական շահույթը կամ վնասը ճանաչվում է, երբ գործարքը ներառում է ձեռնարկատիրական գործունեություն: Մասնակի շահույթը կամ վնասը ճանաչվում է, երբ գործարքը ներառում է ակտիվներ, որոնք ձեռնարկատիրական գործունեության մաս չեն կազմում, նույնիսկ եթե այդ ակտիվները պահվում են դուստր ձեռնարկությունների կողմից: Ներկայումս Ընկերությունը գնահատում է նոր փոփոխության ազդեցությունը իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 17 «Ապահովագրական պայմանագրեր» (թողարկված է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՀՄՍ 17-ը փոխարինում է ՖՀՄՍ 4-ին, որը թույլ էր տալիս ընկերություններին կիրառել ապահովագրական պայմանագրերի համար գործող հաշվապահական հաշվառման գործելակերպը, ինչը դժվարացնում էր մնացած առումներով համանման ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների համեմատությունը և համադրությունը ներդրողների համար: ՖՀՄՍ 17-ը մեկ միասնական սկզբունքի վրա հիմնված հաշվապահական ստանդարտ է՝ ապահովագրողի կողմից պահվող բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, այդ թվում վերաապահովագրության պայմանագրերի հաշվառումը իրականացնելու համար: Ստանդարտը պահանջում է, որ ապահովագրության պայմանագրերի խմբերը ճանաչվեն և չափվեն (i) ապագա դրամական միջոցների հոսքերի ռիսկով ճշգրտված ներկա արժեքով (պայմանագրերի կատարման դրամական հոսքեր)՝ հաշվի առնելով պայմանագրերի կատարման դրամական հոսքերի վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը, որը համահունչ է դիտարկելի շուկայական տեղեկատվությանը, գումարած՝ (եթե արժեքը պարտավորություն է) կամ հանած՝ (եթե արժեքը ակտիվ է) (ii) պայմանագրերի խմբի չբաշխված շահույթի գումարը (պայմանագրերի ծառայության մարժա): Ապահովագրողները կարտացոլեն ապահովագրական պայմանագրերի մեկ խմբից ստացված շահույթը այն ժամանակահատվածում, որի ընթացքում դրանք ապահովում են ծածկույթ և ազատվում են ռիսկից: Եթե պայմանագրերի խումբը հանդիսանում է կամ դառնում է ոչ շահույթաբեր, կազմակերպությունը անմիջապես ճանաչում է վնաս:

6 Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ (շարունակություն)

ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հունիսի 25-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները ներառում են մի շարք պարզաբանումներ՝ ՖՀՄՍ 17-ի ներդրման գործընթացը դյուրինացնելու, ինչպես նաև ստանդարտի պահանջները և անցումային որոշակի դրույթները հստակեցնելու նպատակով: Այս փոփոխությունները վերաբերում են ՖՀՄՍ 17 -ի ութ ոլորտներին և չեն փոխում ստանդարտի հիմնարար սկզբունքները: ՖՀՄՍ 17-ում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները.

- *Ուժի մեջ մտնելու ամսաթիվ.* ՖՀՄՍ 17-ի (փոփոխություններով) ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է երկու տարով: Ստանդարտը պետք է կիրառվի 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 4-ով սահմանված ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակավոր արտոնությունը նույնպես հետաձգվել է մինչև 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջաններ:
- *Ապահովագրության ձեռքբերման դրամական հոսքերի ակնկալվող փոխհատուցում.* կազմակերպություններից պահանջվում է իրենց ձեռքբերման ծախսերի մի մասը դասակարգել համապատասխան պայմանագրերին, որոնց համար ակնկալվում է երկարաձգում, և այդ ծախսերը ճանաչել որպես ակտիվներ, քանի դեռ կազմակերպությունը չի ճանաչել պայմանագրի երկարաձգման ժամկետը: Կազմակերպությունները պարտավոր են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատել ակտիվի վերականգնման հավանականությունը և կոնկրետ ակտիվների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:
- *Ներդրումային ծառայություններին վերագրվող պայմանագրային ծառայությունների մարժա.* Ծածկույթի տարրերը անհրաժեշտ է որոշել՝ հաշվի առնելով հատույցների ծավալը, ինչպես նաև ապահովագրական ծածկույթի և ներդրումային ծառայությունների ակնկալվող ժամկետը՝ փոփոխական վճարներ նախատեսող պայմանագրերի և այլ՝ ընդհանուր մոդելի ներքո ներդրումային եկամուտների ստացում նախատեսող ծառայությունների պայմանագրերի համար: Ներդրումային գործունեության գծով ծախսերը պետք է ներառվեն որպես դրամական միջոցների հոսքեր ապահովագրության պայմանագրի շրջանակներում, երբ կազմակերպությունը նման գործողությունները ձեռնարկում է ապահովագրողի համար ապահովագրության ծածկույթից ստացվող օգուտները մեծացնելու նպատակով:
- *Ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր. վնասների վերականգնում.* Երբ կազմակերպությունը վնաս է ճանաչում սկզբնական ճանաչման պահին հիմնական ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի գծով, կամ խմբում անբարենպաստ բազային ապահովագրության պայմանագրեր ներառելու արդյունքում, կազմակերպությունը պետք է ճշգրտի ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրերի համապատասխան խմբի պայմանագրային ծառայությունների գծով մարժան և ճանաչի այդ վերաապահովագրության պայմանագրերի գծով շահույթ: Վերաապահովագրության պայմանագրով վերականգնված վնասի չափը հաշվարկվում է բազային ապահովագրության պայմանագրերով ճանաչված վնասը բազմապատկելով բազային ապահովագրության պայմանագրերի գծով պահանջների տոկոսին, որը կազմակերպությունն ակնկալում է վերականգնել ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրով: Այս պահանջը կկիրառվի միայն այն դեպքում, եթե ձեռք բերված վերաապահովագրության պայմանագիրը ճանաչվի նախքան բազային ապահովագրության պայմանագրերի գծով վնասի ճանաչումը, կամ վերջինիս հետ միաժամանակ:

6 Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ (շարունակություն)

- *Այլ փոփոխություններ.* Այլ փոփոխություններով նախատեսվում են գործողության շրջանակից բացառություններ վարկային քարտերի որոշ պայմանագրերի (կամ նմանատիպ պայմանագրերի) և որոշ վարկային պայմանագրերի համար: Սահմանվում է նաև ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ապահովագրության պայմանագրերով նախատեսված ակտիվների և պարտավորությունների ներկայացում պորտֆելներում՝ խմբերի փոխարեն: Նախատեսվում է ռիսկերի մեղմացման տարբերակի կիրառելիություն այն դեպքում, երբ ֆինանսական ռիսկերի մեղմացման նպատակով գործադրվում են ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ: Նախատեսվում է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության հնարավորություն ՖՀՄՍ 17-ի կիրառումը նախորդ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվապահական գնահատումներում փոփոխությունների համար: Նախատեսվում է կոնկրետ ապահովագրողին վերագրվող շահութահարկի վճարների և մուտքերի ներառում պայմանագրերի կատարման դրամական հոսքերում, ըստ ապահովագրության պայմանագրի: Սահմանվում են անցումային շրջանի ընթացքում պահանջներից ընտրողական բացառություններ և այլ ոչ էական փոփոխություններ:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը - ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020թ. հունվարի 23-ին և ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Կիրառման սահմանափակ շրջանակ ունեցող այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Մարումը հետաձգելու իրավունքն առաջանում է միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը ժամանակաշրջանի վերջում բավարարում է բոլոր կիրառելի պայմանները:

Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը. ուժի մեջ մտնելու ամսաթվի հետաձգում. ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հուլիսի 15-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները, որոնք վերաբերում են պարտավորությունների որպես կարճաժամկետ և երկարաժամկետ դասակարգմանը, թողարկվել են 2020թ. հունվարին, և նախնական ուժի մեջ մտնելու ամսաթիվ է սահմանվել 2022թ. հունվարի 1-ը: Այնուամենայնիվ, COVID-19 համավարակով պայմանավորված, ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է մեկ տարով, որպեսզի կազմակերպությունները բավարար ժամանակ ունենան փոփոխությունների արդյունքում դասակարգումներում տեղի ունեցող փոփոխությունները ներդնելու համար:

6 Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ (շարունակություն)

«Նախքան ակտիվի նպատակային օգտագործումը ստացված հասույթ, անբարենպաստ պայմանագրեր, պայմանագրի կատարման արժեքը», «Հղում հայեցակարգային հիմունքներին». ՀՀՄՍ 16-ի, ՀՀՄՍ 37-ի և ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ՝ սահմանափակ կիրառության շրջանակով, և ՖՀՄՍ 1-ին, ՖՀՄՍ 9-ին, ՖՀՄՍ 16-ին և ՀՀՄՍ 41-ին վերաբերող 2018-2020 թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ (թողարկված են 2020թ. մայիսի 14-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 16-ի փոփոխությամբ կազմակերպություններին արգելվում է հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքից նվազեցնել այն պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, որն արտադրվել է կազմակերպության կողմից ակտիվն իր նպատակային օգտագործման համար անհրաժեշտ վիճակի բերելու ընթացքում: Նման պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, դրա արտադրության ծախսերի հետ միասին, այժմ ենթակա է ճանաչման շահույթում կամ վնասում: Նման պատրաստի արտադրանքի սկզբնական արժեքի չափման համար Կազմակերպությունը պետք է կիրառի ՀՀՄՍ 2-ը: Սկզբնական արժեքը չի ներառի նման կերպ փորձարկվող ակտիվի մաշվածությունը, քանի որ այն դեռ պատրաստ չէ իր նպատակային օգտագործման համար: ՀՀՄՍ 16-ի փոփոխությունը նաև հստակեցնում է, որ կազմակերպությունը «ստուգում է ակտիվի պատշաճ գործունակությունը»՝ ակտիվի տեխնիկական և ֆիզիկական բնութագրերը գնահատելու միջոցով: Այս չափման համար էական չեն այդպիսի ակտիվի ֆինանսական ցուցանիշները: Հետևաբար, ակտիվը կարող է շահագործվել ղեկավարության մտադրությունների համաձայն, և մաշվածությունը կարող է հաշվարկվել մինչև ղեկավարության կողմից ակնկալվող գործառնական շահագործման համար անհրաժեշտ վիճակի հասնելը:

ՀՀՄՍ 37-ի փոփոխությունը հստակեցնում է «պայմանագրի կատարման գծով ծախսեր» հասկացությունը: Փոփոխությամբ պարզաբանվում է, որ պայմանագրի կատարման գծով ուղղակի ծախսերը ներառում են այդ պայմանագրի կատարման հավելյալ ծախսերը, ինչպես նաև պայմանագրի կատարման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի բաշխումը: Փոփոխությամբ նաև հստակեցվում է, որ նախքան անբարենպաստ պայմանագրի գծով առանձին պահուստի ձևավորումը, կազմակերպությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ պայմանագրի կատարման ընթացքում օգտագործված ակտիվների գծով, այլ ոչ թե պայմանագրի կատարման համար հասկացված ակտիվների գծով:

ՖՀՄՍ 3-ում կատարվել է լրացում՝ ներառելով հղում Ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքներին, ինչը թույլ է տալիս սահմանել ակտիվի կամ պարտավորության հասկացությունը ձեռնարկատիրական գործունեության միավորման համատեքստում: Մինչ այս փոփոխության ընդունումը, ՖՀՄՍ 3-ը հղում էր կատարում 2001թ.-ի Ֆինանսական հաշվետվությունների Հայեցակարգային հիմունքներին: Բացի այդ, ՖՀՄՍ 3-ում ավելացվել է նոր բացառություն պայմանական ղեպերի և պայմանագրային պարտավորությունների համար: Այս բացառությամբ նախատեսվում է, որ ՖՀՄՍ 3-ը կիրառող կազմակերպությունը, որոշակի տիպի պայմանական ղեպերի և պայմանագրային պարտավորությունների համար Ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքների փոխարեն պետք է հղում կատարի ՀՀՄՍ 37-ին կամ ՖՀՄՍԽ (IFRIC) 21-ին: Առանց այս նոր բացառության, կազմակերպությունը ստիպված կլիներ ձեռնարկատիրական գործունեության միավորման ղեպում ճանաչել որոշ պարտավորություններ, որոնք չէր ճանաչի համաձայն ՀՀՄՍ 37-ի: Հետևաբար, ձեռքբերումից անմիջապես հետո կազմակերպությունը ստիպված կլիներ ապաճանաչել այդպիսի պարտավորությունները և ճանաչել տնտեսական օգուտներ չմարմնավորող եկամուտ: Նաև պարզաբանվել է, որ ձեռք բերող կազմակերպությունը պարտավոր չէ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչել պայմանական ակտիվներ, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 37-ում:

ՖՀՄՍ 9-ի փոփոխությունն անդրադառնում է այն հարցերին, թե որ տեսակի վճարումներն են ենթակա ներառման «10% փորձարկման» կազմում՝ ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման նպատակով: Ծախսերը կամ վճարումները կարող են կատարված լինել հոգուտ երրորդ անձանց կամ վարկատուի: Այս փոփոխության համաձայն, երրորդ անձանց օգտին կատարված ծախսերը կամ վճարումները չեն ներառվի «10% փորձարկման» կազմում:

6 Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ (շարունակություն)

Փոփոխություններ են կատարվել ՖՀՄՍ 16-ի 13-րդ նկարագրական օրինակում. հանվել է վարձատուի կողմից վարձակալվող գույքի բարելավումներին վերագրվող վճարումների օրինակը: Այս փոփոխությունը կատարվել է՝ վարձակալվող գույքի բարելավումների հաշվարկման հնարավոր անորոշությունից խուսափելու համար:

ՖՀՄՍ 1-ը թույլ է տալիս օգտվել բացառությունից այն դեպքում, եթե դուստր ձեռնարկությունը սկսում է ՖՀՄՍ-ի կիրառումն ավելի ուշ ամսաթվով, քան իր մայր կազմակերպությունը: Դուստր ձեռնարկությունը կարող է չափել իր ակտիվներն ու պարտավորությունները այն հաշվեկշռային արժեքով, որով դրանք պետք է ներառվեին մայր կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցնելու ամսաթվից, եթե տեղի ունեցած չլինեին ճշգրտումներ համախմբման և ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքների արտացոլման նպատակներով, որի ներքո մայր կազմակերպությունը ձեռք է բերել նշված դուստր ձեռնարկությունը: ՖՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, որը հնարավորություն է տալիս սույն ՖՀՄՍ 1-ի բացառությունը կիրառած կազմակերպություններին նաև արտարժույթի փոխարկումից կուտակային տարբերությունները չափելիս օգտագործել մայր կազմակերպության կողմից ներկայացված թվային մեծությունները՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցման ամսաթվից: ՖՀՄՍ 1-ի այս փոփոխությամբ վերոնշյալ բացառությունը տարածվում է արտարժույթի փոխարկումից առաջացած կուտակային տարբերությունների վրա, և նպատակ ունի նվազեցնել ՖՀՄՍ-ն առաջին անգամ կիրառող կազմակերպության ծախսերը: Այս փոփոխությունը կկիրառվի նաև դուստր և համատեղ ձեռնարկությունների վրա, որոնք կօգտվեն ՖՀՄՍ 1-ով սահմանված նույն բացառությունից:

Վերացվել է պահանջը, ըստ որի կազմակերպությունները ՀՀՄՍ 41-ի համաձայն իրական արժեքը չափելիս պարտավոր էին հարկային հաշվառման տեսանկյունից հաշվի չառնել դրամական հոսքերը: Այս փոփոխության նպատակն է ապահովել համապատասխանություն հարկումից հետո զեղչված դրամական հոսքերի ստանդարտի պահանջին:

Բազային տոկոսադրույքի (IBOR) բարեփոխում. ՖՀՄՍ 9-ի, ՀՀՄՍ 39-ի, ՖՀՄՍ 7-ի, ՖՀՄՍ 4-ի և ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ - Փուլ 2 (թողարկված են 2020թ. օգոստոսի 27-ին և ուժի մեջ են մտնում 2021թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): 2-րդ փուլի ուղղումներն ուղղված են բարեփոխումների ներդրման արդյունքում ի հայտ եկող հարցերի լուծմանը, ներառյալ այն հարցերի, որոնք վերաբերում են մեկ բազային տոկոսադրույքի փոխարինմանը այլընտրանքայինով: Փոփոխությունները վերաբերում են հետևյալ ոլորտներին.

- *Բազային տոկոսադրույքի բարեփոխումից բխող դրամական միջոցների պայմանագրային հոսքերի որոշման հիմքում ընկած փոփոխությունների մշակում.* («IBOR բարեփոխում»): Ամորտիզացված արժեքով չափման ենթակա գործիքների համար, փոփոխություններով նախատեսված է, որ գործնական նպատակահարմարությունից ելնելով, կազմակերպությունները IBOR- ի բարեփոխման արդյունքում պայմանագրային դրամական հոսքերի որոշման հիմքի փոփոխությունը պետք է հաշվարկեն արդյունավետ տոկոսադրույքի արդիականացման միջոցով, օգտագործելով ՖՀՄՍ 9-ի B5.4.5 պարբերության ուղեցույցը: Հետևաբար, այդ ժամանակ շահույթ կամ վնաս չի ճանաչվել: Այս գործնական նպատակահարմարությունը կիրառելի է միայն այդպիսի փոփոխության նկատմամբ և այնքանով, որքանով այն անհրաժեշտ է որպես IBOR բարեփոխման ուղղակի հետևանք, և նոր հիմքը տնտեսապես համարժեք է նախորդ հիմքին: ՖՀՄՍ 9-ի ներդրման ժամանակավոր արտոնությունից օգտվող ապահովագրողները նույնպես պետք է առաջնորդվեն նույն գործնական նպատակահարմարությամբ: Նաև փոփոխվել է ՖՀՄՍ 16-ը, ըստ որի վարձակալներից պահանջվում է նույն գործնական նպատակահարմարությամբ առաջնորդվել վարձակալության պայմանագրի այն փոփոխությունները հաշվառելիս, որոնք IBOR բարեփոխման արդյունքում հանգեցնում են ապագա վարձակալական վճարների որոշման հիմքի փոփոխության:

6 Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ (շարունակություն)

- *Հեջավորման հարաբերություններում պայմանագրով չսահմանված ռիսկի բաղադրիչների 1-ին փուլի գծով փոփոխությունների համար սահմանված արտոնությունների ավարտի ամսաթիվը. 2-րդ փուլի փոփոխությունների համաձայն կազմակերպություններից պահանջվում է հեռանկարում դադարեցնել 1-ին փուլի արտոնությունները պայմանագրով չսահմանված ռիսկի բաղադրիչների նկատմամբ նշված երկու ամսաթվերից առավել վաղ ամսաթվի դրությամբ. պայմանագրով չսահմանված ռիսկի բաղադրիչում փոփոխության կատարման ամսաթիվ, կամ հեջավորման հարաբերությունների դադարեցման ամսաթիվ: 1-ին փուլի փոփոխությունները չեն սահմանում ռիսկի բաղադրիչների ավարտի ամսաթիվը:*
- *Հեջավորման հաշվառմանը ներկայացվող հատուկ պահանջների կիրառումից լրացուցիչ ժամանակավոր բացառություններ. 2-րդ փուլի փոփոխությունները նախատեսում են հեջավորման հաշվառման ՀՀՄՍ 39 և ՖՀՄՍ 9-ով սահմանված հատուկ պահանջների կիրառման լրացուցիչ ժամանակավոր արտոնություններ հեջավորման հարաբերությունների նկատմամբ, որոնք անմիջական ազդեցություն են կրել IBOR բարեփոխման արդյունքում:*
- *IBOR բարեփոխմանը վերաբերող լրացուցիչ բացահայտումներ համաձայն ՖՀՄՍ 7-ի. Փոփոխությունները սահմանում են հետևյալ տեղեկատվության բացահայտման պահանջներ. (i) ինչպես է կազմակերպությունը կառավարում այլընտրանքային բազային տոկոսադրույքների անցումը. առաջընթացը և անցումից բխող ռիսկերը. (ii) քանակական տեղեկատվություն անցմանը նախապատրաստվող ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների վերաբերյալ տարանջատված ըստ նշանակալից բազային տոկոսադրույքների. (iii) IBOR բարեփոխման արդյունքում ռիսկերի կառավարման ռազմավարության ցանկացած փոփոխության նկարագրություն:*

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվություններին վրա:

7 Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Գործառնական սեզմենտներն այն բաղադրիչներն են, որոնք ներգրավված են գործարար գործունեությանը և կարող են հասույթ կամ ծախսեր ունենալ, որի գործառնական արդյունքները պարբերաբար դիտարկվում են գործառնական կառավարման բարձրագույն մարմնի կողմից (ԳԿԲՄ), և նրանց համար առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: ԳԿԲՄ-ի գործառույթներն իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենը:

(ա) Արտադրանքի և ծառայությունների նկարագրությունը, որոնց իրացումից յուրաքանչյուր հաշվետու սեզմենտ ստանում է հասույթ

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է երեք գործառնական սեզմենտների շրջանակներում.

- Բեռնափոխադրումներ՝ ներկայացված է երկաթուղու միջոցով բեռների փոխադրմամբ.
- Ուղևորափոխադրումներ՝ ներկայացված է երկաթուղու միջոցով ուղևորների փոխադրմամբ.
- Կոնցեսիոն ակտիվների բարելավում՝ ներկայացված է կոնցեսիոն համաձայնագրի շրջանակներում շահագործվող ենթակառուցվածքի հետ կապված ծառայություններով:

(բ) Հաշվետու սեզմենտների որոշման համար ղեկավարության կողմից օգտագործված գործոնները

Ընկերության սեզմենտները ռազմավարական բիզնես միավորներ են, որոնք կենտրոնանում են տարբեր հաճախորդների վրա: Նրանք կառավարվում են առանձին, քանի որ յուրաքանչյուր բիզնես միավորի համար պահանջվում է տարբեր շուկայավարման ռազմավարություն և ծառայության մակարդակ:

(գ) Գործառնական սեզմենտի շահույթի կամ վնասի, ակտիվների և պարտավորությունների չափում

Գործառնական կառավարման բարձրագույն մարմինը դիտարկում է ՖՀՄՄ-ին համապատասխան պատրաստված ֆինանսական տեղեկատվությունը, որը ճշգրտվել է՝ հաշվի առնելով ներքին հաշվետվությունների պատրաստման պահանջները: Այդ ֆինանսական տեղեկատվությունը տարբերվում է որոշակի հարցերում ՖՀՄՄ-ից:

- (i) շահութահարկի գումարները չեն բաշխվում ըստ սեզմենտների.
- (ii) արտարժույթային տարբերություններից շահույթը կամ վնասը չի բաշխվում ըստ սեզմենտների.
- (iii) այլ եկամուտը, ներառյալ հիմնական միջոցների վաճառքից ստացված եկամուտը, չի ճանաչվում.
- (iv) տոկոսային եկամուտը չի ճանաչվում:

Գործառնական կառավարման բարձրագույն մարմինը գնահատում է յուրաքանչյուր սեզմենտը հիմք ընդունելով շահույթը՝ մինչև հարկումը:

7 Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

(դ) Տեղեկատվություն հաշվետու սեզմենտի շահույթի կամ վնասի, ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ

Հաշվետու սեզմենտների վերաբերյալ տեղեկատվությունը 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ներկայացված է ստորև.

	Բեռնափոխա- դրումներ	Ուղևորափոխա- դրումներ	Կոնցեսիոն ակտիվների բարելավում	Ընդամենը
<i>հազ. ՀՀ դրամ</i>				
Արտաքին կողմերից հասույթ - Հիմնական գործունեությունից հասույթ	18,323,231	162,031	2,461,536	20,946,798
Ընդամենը հասույթ	18,323,231	162,031	2,461,536	20,946,798
Անձնակազմի ծախսեր	(7,493,718)	(1,660,188)	(658,555)	(9,812,461)
Մաշվածություն և ամորտիզացիա	(3,655,588)	(809,874)	(51,208)	(4,516,670)
Օգտագործված պաշարներ	(348,886)	(77,294)	(1,487,623)	(1,913,803)
Էլեկտրաէներգիա	(1,204,159)	(266,774)	(3,823)	(1,474,756)
Օգտագործված վառելիք	(256,013)	(56,718)	(7,795)	(320,526)
Այլ ծախսեր	(1,506,424)	(333,740)	(252,532)	(2,092,696)
Սեզմենտի գործունեության արդյունքը	3,858,443	(3,042,557)	-	815,886
Բեռնային փոխադրումներից հասույթը ներառում է Ծանոթագրություն 17-ում նշված կայարանային ծառայությունների, վագոնների վարձակալության, էքսպեդիտորական ծառայությունների գումարները և այլ ծառայությունների գումարները:				
Ակտիվներ և պարտավորություններ				
	Բեռնափոխա- դրումներ	Ուղևորափոխա- դրումներ	Կոնցեսիոն ակտիվների բարելավում	Ընդամենը
<i>հազ. ՀՀ դրամ</i>				
Ոչ ընթացիկ ակտիվներ	68,357,691	14,133,414	9,219,052	91,710,157
- ներառյալ շարժակազմ	23,668,434	4,232,778	1,614,089	29,515,301
Ընթացիկ ակտիվներ	9,399,311	2,082,361	1,599,521	13,081,193
Ընդամենը հաշվետու սեզմենտների ակտիվներ	77,757,002	16,215,775	10,818,573	104,791,350
Ոչ ընթացիկ պարտավորություններ	1,551,815	343,795	264,079	2,159,689
Ընթացիկ պարտավորություններ	2,438,828	540,308	415,026	3,394,162
Ընդամենը հաշվետու սեզմենտների պարտավորություններ	3,990,643	884,103	679,105	5,553,851

7 Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

Հաշվետու սեզմենտների վերաբերյալ տեղեկատվությունը 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ներկայացված է ստորև.

	Բեռնափոխա- դրումներ	Ուղևորափոխա- դրումներ	Կոնցեսիոն ակտիվների բարելավում	Ընդամենը
<i>հազ. ՀՀ դրամ</i>				
Արտաքին կողմերից հասույթ - Հիմնական գործունեությունից հասույթ	18,547,785	1,054,109	2,564,298	22,166,192
Ընդամենը հասույթ	18,547,785	1,054,109	2,564,298	2,166,192
Անձնակազմի ծախսեր	(6,066,050)	(2,028,489)	(582,800)	(8,677,339)
Մաշվածություն և ամորտիզացիա	(3,324,042)	(1,111,561)	(63,730)	(4,499,333)
Օգտագործված պաշարներ	(317,158)	(106,058)	(1,480,879)	1,904,095)
Էլեկտրաէներգիա	(1,175,016)	(392,925)	(4,288)	(1,572,229)
Օգտագործված վառելիք	(272,974)	(91,283)	(10,652)	(374,909)
Այլ ծախսեր	(1,610,115)	(538,422)	(421,949)	(2,570,486)
Սեզմենտի գործունեության արդյունքը	5,782,430	(3,214,629)	-	2,567,801

Բեռնային փոխադրումներից հասույթը ներառում է Ծանոթագրություն 17-ում նշված կայարանային ծառայությունների, վագոնների վարձակալության, էքսպեդիտորական ծառայությունների գումարները և այլ ծառայությունների գումարները:

Ակտիվներ և պարտավորություններ

	Բեռնափոխա- դրումներ	Ուղևորափոխա- դրումներ	Կոնցեսիոն ակտիվների բարելավում	Ընդամենը
<i>հազ. ՀՀ դրամ</i>				
Ոչ ընթացիկ ակտիվներ	61,453,205	19,193,541	9,835,731	90,482,477
- ներառյալ շարժակազմ	20,643,177	5,547,110	1,637,905	27,828,192
Ընթացիկ ակտիվներ	8,327,943	2,784,774	1,672,898	12,785,615
Ընդամենը հաշվետու սեզմենտների ակտիվներ	69,781,148	21,978,315	11,508,629	103,268,092
Ոչ ընթացիկ պարտավորություններ	1,582,611	529,208	317,912	2,429,731
Ընթացիկ պարտավորություններ	2,257,967	755,040	453,575	3,466,582
Ընդամենը հաշվետու սեզմենտների պարտավորություններ	3,840,578	1,284,248	771,487	5,896,313

7 Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

(ե) Հաշվետու սեզմենտների հասույթի, շահույթի կամ վնասի, ակտիվների և պարտավորությունների համադրում

<i>հազ. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Ընդամենը հաշվետու սեզմենտների գործունեության արդյունքը	815,886	2,567,801
(ա) Սեզմենտների հաշվետվությունից բացառված այլ գործառնական եկամտի գծով ճշգրտում	820,264	402,372
(բ) Սեզմենտների հաշվետվությունից բացառված այլ գործառնական ծախսերի գծով ճշգրտում	(187,961)	(1,746,579)
(գ) Տոկոսային եկամտի գծով ճշգրտում	712,300	518,565
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	2,160,489	1,742,159

(զ) Հասույթի վերլուծությունն ըստ արտադրանքի և ծառայությունների

Ընկերության հասույթի վերլուծությունն ըստ արտադրանքի և ծառայությունների ներկայացված է Ծանոթագրություն 17-ում:

(է) Աշխարհագրական տեղեկատվություն

Հասույթը ստացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում:

(ը) Հիմնական հաճախորդներ

Հաճախորդներից ստացված հասույթը, որոնց բաժին է ընկնում ընդհանուր հասույթի 10 տոկոսը կամ ավելին, հետևյալն է.

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Բեռնափոխադրումներ	Ընդամենը
«ԳեոՊրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	7,186,039	7,186,039
«Ապավեն» ՍՊԸ	2,778,498	2,778,498
«ՄԻՓԻԷՍ ՕԲԼ ՔՈՐՓՈՐՆՅՅՇՆ» ՍՊԸ	2,171,548	2,171,548
Ընդամենը 2020թ. հասույթ	12,136,085	12,136,085

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Բեռնափոխադրումներ	Ընդամենը
«ԳեոՊրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	6,709,834	6,709,834
«Ապավեն» ՍՊԸ	3,069,920	3,069,920
Ընդամենը 2019թ. հասույթ	9,779,754	9,779,754

7 Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

(թ) Համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների իրականացման գծով սուբսիդավորման ենթակա վնասների հաշվարկ

2020թ. ուղևորափոխադրումներից Ընկերության վնասի գումարը կազմել է 3,042,557 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 3,214,629 հազ. ՀՀ դրամ):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համաձայնեցված երթուղիները հետևյալն են.

Տեղական հաղորդակցություն

- Երևան - Գյումրի - Երևան – մեկ երկկողմանի էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ, և մեկ միակողմանի էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ (2019 թ.: մեկ երկկողմանի էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ, և մեկ միակողմանի էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ):
- Գյումրի - Երևան - Գյումրի – մեկ երկկողմանի էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ, և մեկ միակողմանի էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ (2019 թ. -ին՝ մեկ երկկողմանի էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ, և մեկ միակողմանի էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ):
- Երևան - Գյումրի - Երևան: արագընթաց «Էքսպրեսս» – մեկ երկկողմանի արագընթաց «Էքսպրեսս» ՅՈՒՄԸ էլեկտրագնացք՝ շաբաթական երեքական երթևեկությամբ՝ ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերին (2019 թ. -ին՝ մեկ երկկողմանի արագընթաց «Էքսպրեսս» էլեկտրագնացք՝ շաբաթական երեքական երթևեկությամբ՝ ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերին):
- Գյումրի - Երևան - Գյումրի: էլեկտրագնացք ՅՈՒՄԸ – մեկ երկկողմանի ՅՈՒՄԸ էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ 2020 թ. -ի հուլիսի 1-ից:
- Արաքս - Երևան - Արաքս – մեկ երկկողմանի էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ (2019 թ. -ին՝ մեկ երկկողմանի էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ):
- Երասխ - Երևան - Երասխ – մեկ երկկողմանի էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ (2019 թ. -ին՝ մեկ երկկողմանի էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ):
- Փոխադրման ամառային սեզոնին՝ հունիսից մինչև օգոստոս, Երևան - կանգառ Ալմաստ-Երևան և կանգառ Ալմաստ - Շորժա - կանգառ Ալմաստ - Երևան, մեկ երկկողմանի էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ, ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերին (2019թ. -ին, մեկ երկկողմանի էլեկտրագնացք՝ օրական մեկական երթևեկությամբ, ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերին):

Միջպետական հաղորդակցություն

- Երևան – Թբիլիսի - Երևան՝ ամենօրյա երկկողմանի երթևեկությամբ երկու կազմով 2020թ. հունվարի 1-ից հունվարի 15-ը, 2020թ. հունվարի 16-ից մինչև հունիսի 13-ը և 2020թ. հոկտեմբերի 2-ից մինչև դեկտեմբերի 31-ը մեկ կազմով միակողմանի երթևեկությամբ Երևանից՝ գույգ, իսկ Թբիլիսիից՝ կենս օրերին (2019թ.՝ երթևեկությունը գույգ օրերին՝ հունվար-հունիս և հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին):
- Երևան - Բաթումի - Երևան՝ ամենօրյա երթևեկությամբ հունիս-սեպտեմբեր ամիսներին (2019թ.՝ ամենօրյա երթևեկություն հունիս-սեպտեմբեր ամիսներին):

7 Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

Ընդհանուր համաձայնեցված ուղևորատեղերի քանակը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության փորձագիտական գնահատման հիման վրա.

- տեղական հաղորդակցությամբ՝ 113.7 հազ. ուղևորատեղ (2019թ.՝ 108.9 հազ. ուղևորատեղ).
- միջպետական հաղորդակցությամբ՝ 7,6 հազ. ուղևորատեղ (2019թ.՝ 7 հազ. ուղևորատեղ):

Տեխնիկական մասնագրերի հիման վրա.

- տեղական հաղորդակցությամբ՝ 111.3 հազ. ուղևորատեղ (2019թ.՝ 109.5 հազ. ուղևորատեղ).
- միջպետական հաղորդակցությամբ՝ 0.7 հազ. ուղևորատեղ (2019թ.՝ 7.9 հազ. ուղևորատեղ):

Տեղական հաղորդակցության էլեկտրագնացքներում հնարավոր նստելատեղերի քանակի հաշվարկումը կատարվել է ելնելով գնացքի կազմում վագոնների քանակից՝ առկա տեխնիկական հնարավորություններին և գնացքների ուղևորության անվտանգության սահմանված պահանջներին համապատասխան:

Երևան - Գյումրի - Երևան

Էլեկտրագնացքների երթևեկության գրաֆիկը հետևյալն է՝ ամենօրյա երթևեկությամբ մեկ էլեկտրագնացք ուղևորվում է Երևան կայանից մինչև Գյումրի կայան և հետադարձ ուղղությամբ՝ Գյումրի կայանից մինչև Երևան կայան, ինչպես նաև սու մեկ լրացուցիչ ցերեկային էլեկտրագնացք՝ Երևանի կայանից մինչև Գյումրի կայան 2020 թ.-ի հունվարի 1-ից հունիսի 30-ը: Նստատեղերի քանակը մեկ էլեկտրագնացքում կազմում է 380 տեղ: 2020 թ.-ի ընթացքում էլեկտրագնացքն իրականացրել է 931 միակողմանի երթուղի: Էլեկտրագնացքի ամենօրյա ուղևորության դեպքում տարեկան տեղերի քանակը կազմում է 353.78 հազար, միջին ամսական տեղերի քանակը՝ 29.48 հազար:

Տեղերի քանակի հաշվարկման բանաձև՝

$$1 \text{ էլեկտրագնացք} * 380 \text{ տեղ} = 380 \text{ տեղ}$$

2020 թ.-ին էլեկտրագնացքը փաստացի իրականացրել է 931 միակողմանի երթուղի.

$$931 \text{ երթուղի} * 380 \text{ տեղ} = 353,780 \text{ տեղ}$$

Տեղերի միջին ամսական քանակը՝ 353,780 տեղ / 12 ամիս = 29,482 տեղ

Գյումրի - Երևան - Գյումրի

Էլեկտրագնացքների երթևեկության գրաֆիկը հետևյալն է՝ ամենօրյա երթևեկությամբ մեկ էլեկտրագնացք ուղևորվում է Գյումրի կայանից մինչև Երևան կայան և հետադարձ ուղղությամբ՝ Երևան կայանից մինչև Գյումրի կայան, ինչպես նաև սու մեկ լրացուցիչ ցերեկային ուղղություն՝ Գյումրի կայանից մինչև Երևանի կայան 2020 թ.-ի հունվարի 1-ից հունիսի 30-ը: Նստատեղերի քանակը մեկ էլեկտրագնացքում կազմում է 362 տեղ: 2020 թ.-ի ընթացքում էլեկտրագնացքն իրականացրել է 931 միակողմանի երթուղի: Էլեկտրագնացքի ամենօրյա ուղևորության դեպքում տարեկան տեղերի քանակը կազմում է 337.02 հազար, միջին ամսական տեղերի քանակը՝ 28.09 հազար:

Տեղերի քանակի հաշվարկման բանաձև՝

$$1 \text{ էլեկտրագնացք} * 362 \text{ տեղ} = 362 \text{ տեղ}$$

2020 թ.-ին էլեկտրագնացքը փաստացի իրականացրել է 931 միակողմանի երթուղի.

$$931 \text{ երթուղի} * 362 \text{ տեղ} = 337,022 \text{ տեղ}$$

Տեղերի միջին ամսական քանակը՝ 337,022 տեղ / 12 ամիս = 28,085 տեղ

7 Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

Գյումրի - Երևան - Գյումրի: ՅՈՒ 2Ճ էլեկտրագնացք

Էլեկտրագնացքների երթևեկության գրաֆիկը հետևյալն է՝ ամենօրյա երթևեկությամբ մեկ էլեկտրագնացք ՅՈՒ 2Ճ ուղևորվում է Գյումրի կայանից մինչև Երևան կայան և հետադարձ ուղևորությամբ 2020 թ.-ի հունիսի 1-ից դեկտեմբերի 31-ը: 2020 թ.-ի ընթացքում փաստացի էլեկտրագնացքն իրականացրել է 326 միակողմանի երթուղի 132 նստատեղերի քանակով և 8 երթուղի՝ 107 նստատեղերի քանակով Երևան կայանից մինչև Գյումրի կայան: Էլեկտրագնացքի ամենօրյա ուղևորության դեպքում տարեկան տեղերի քանակը կազմում է 43.89 հազար, միջին ամսական տեղերի քանակը՝ 3.66 հազար:

Տեղերի քանակի հաշվարկման բանաձև՝

1 էլեկտրագնացք 2 վագոններով 132 և 107 տեղեր

326 երթուղի * 132 տեղ = 43,032 տեղ

8 երթուղի * 107 տեղ = 856 տեղ

Ընդամենը՝ 43,888 տեղ

Տեղերի միջին ամսական քանակը՝ 43,888 տեղ / 12 ամիս = 3,657 տեղ

Երևան - Գյումրի - Երևան - արագընթաց «Էքսպրեսս»

Էլեկտրագնացքների երթևեկության գրաֆիկը հետևյալն է՝ մեկ էլեկտրագնացք ուղևորվում է Երևան կայանից մինչև Գյումրի կայան և հետադարձ ուղևորությամբ՝ Գյումրի կայանից մինչև Երևան կայան շաբաթական երեք անգամ՝ ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերին: Այս ուղևորությունը 2020 թ. հունվարի 1-ից էլեկտրագնացք ՅՈՒ 2-ն աշխատել է 132 նստատեղերի քանակով և 2020 թ. հունիսի 1-ից ՅՈՒ 2Ճ-ի կազմը փոխարինվել է 107 նստատեղերով: Արագընթաց ՅՈՒ 2Ճ էլեկտրագնացքը 132 նստատեղով 2020թ.-ին իրականացրել է միակողմանի 122 երթուղի: Ամենօրյա ուղևորության դեպքում տարեկան տեղերի քանակը կազմում է 16.10 հազար, միջին ամսական տեղերի քանակը՝ 1.34 հազար:

Արագընթաց ՅՈՒ 2Ճ էլեկտրագնացքը 107 նստատեղով 2020թ.-ին իրականացրել է միակողմանի 76 երթուղի: Ամենօրյա ուղևորության դեպքում տարեկան տեղերի քանակը կազմում է 8.13 հազար, միջին ամսական տեղերի քանակը՝ 0.68 հազար:

Տեղերի քանակի հաշվարկման բանաձև՝

1 էլեկտրագնացք * 132 տեղ = 132 տեղ

122 երթուղի * 132 տեղ = 16,104 տեղ

Տեղերի միջին ամսական քանակը՝ 16,104 տեղ / 12 ամիս = 1,342 տեղ

1 էլեկտրագնացք * 107 տեղ = 107 տեղ

76 երթուղի * 107 տեղ = 8,132 տեղ

Տեղերի միջին ամսական քանակը՝ 8,132 տեղ / 12 ամիս = 678 տեղ

7 Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

Երասխ - Երևան - Երասխ

Էլեկտրագնացքների երթևեկության գրաֆիկը հետևյալն է՝ ամենօրյա երթևեկությամբ մեկ էլեկտրագնացք ուղևորվում է Երասխ կայանից մինչև Երևան կայան և հետադարձ ուղղությամբ՝ Երևան կայանից մինչև Երասխ կայան: Նստատեղերի քանակը մեկ էլեկտրագնացքում կազմում է 400 տեղ: Համապատասխանաբար երկկողմանի երթևեկության դեպքում տեղերի քանակը կրկնապատկվում է՝ 800 տեղ: 2020 թ.-ի ընթացքում էլեկտրագնացքն աշխատել է 366 օր, տեղերի քանակը կազմել է տարեկան 292.8 հազար, միջին ամսական տեղերի քանակը՝ 24.4 հազար տեղ:

Տեղերի քանակի հաշվարկման բանաձև՝

$$1 \text{ էլեկտրագնացք} * 400 \text{ տեղ} = 400 \text{ տեղ}$$

Ըստ էլեկտրագնացքի երթուղու՝

$$400 \text{ տեղ} + 400 \text{ տեղ} = 800 \text{ տեղ}$$

$$366 \text{ օր} * 800 \text{ տեղ} = 292,800 \text{ տեղ}$$

$$\text{Տեղերի միջին ամսական քանակը՝ } 292,800 \text{ տեղ} / 12 \text{ ամիս} = 24,400 \text{ տեղ}$$

Արաքս - Երևան - Արաքս

Էլեկտրագնացքների երթևեկության գրաֆիկը հետևյալն է՝ ամենօրյա երթևեկությամբ մեկ էլեկտրագնացք ուղևորվում է Արաքս կայանից մինչև Երևան կայան և հետադարձ ուղղությամբ՝ Երևան կայանից մինչև Արաքս կայան: Նստատեղերի քանակը մեկ էլեկտրագնացքում կազմում է 388 տեղ: Համապատասխանաբար երկկողմանի երթևեկության դեպքում տեղերի քանակը կազմում է 776 տեղ: 2020 թ.-ի ընթացքում էլեկտրագնացքն աշխատել է 366 օր, տեղերի քանակը կազմել է տարեկան 284.02 հազար, միջին ամսական տեղերի քանակը՝ 23.67 հազար տեղ:

Տեղերի քանակի հաշվարկման բանաձև՝

$$1 \text{ էլեկտրագնացք} * 388 \text{ տեղ} = 388 \text{ տեղ}$$

Ըստ էլեկտրագնացքի երթուղու՝

$$388 \text{ տեղ} + 388 \text{ տեղ} = 776 \text{ տեղ}$$

$$366 \text{ օր} * 776 \text{ տեղ} = 284,016 \text{ տեղ}$$

$$\text{Տեղերի միջին ամսական քանակը՝ } 284,016 \text{ տեղ} / 12 \text{ ամիս} = 23,668 \text{ տեղ}$$

